

2749

Իւն տիկին ՆԱԴԵՃԴԱ ՍԱՐԳՍԵԱՆ
Ա.Ռ.Ա.Ֆ.Է.Լ.ԵԱՆՑԻ:

Ամբողջ հարձակում:

ՌՌՃԻԿ

ԲԱՅԱՆԱՆԵՐԻՆ

(Արտատպւած «Հովիտ» շաբաթաթերթից)

Գրեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց

Жалованье священникамъ. Переп. изъ журнала
«ОВИТЬ». Сост. протоіерей Е. Гегамянецъ.



ԳԻՆԸ 30-ԿՈՊ.

Б А  К У,

ТИПОГРАФИЯ „ТРУЖЕНИКЪ“ А. А. КУИНДИЯ.
1915 г.

206
9-42

2749

30 SEP 2008

206

9-42 44.

ՌՈՃԻԿ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Բագուի եկեղեցական ծխական դպրոցների
դռները դեռ չբացված ներկայ ուսումնական տա-
րւայ համար՝ արդէն դրական լուրեր են պատ-
ւում քաղաքում՝ թէ հոգաբարձութիւնը փող
չունի՝ նոյնիսկ ուսոցչական խմբի սեպտեմբերի
ոտօնիկները վճարելու:

1007
31730

Լուրերը անշուշտ չափազանցեցրած են:
Սակայն ընդհանուր ճշմարտութիւնը այս է, որ,
արդարև, մեր դպրոցների նիւթական վիճակը
շատ տագնապալից է: Եւ հոգաբարձութեան
կողմից առանձին, արտակարգ եռանդ պէտք է
գործ դրել՝ ներկայ ուսումնական տարին՝ մի
կերպ գլուխ հանելու համար:

Ընթերցողը պիտի գիտենայ, որ Բագուի ե-
կեղեցական ծխական դպրոցների նիւթական
տագնապը՝ նոր, պատահական բան չէ, այլ հին
պարբերական, հոգաբարձութեան պաշտօնավա-
րութեան հէնց առաջին տարւանից սկսած:

Հետաքար պէտք է այդ ցաւալի երևոյթի
պատճառը, իսկական պատճառը որոնել ու
զտնել, որ ապա թէ կարելի լինի մի ճար ա-
նել:



Անուրանալի է, որ մեր հոգաբարձական կազմը՝ բաղկացած է ինտելիգենտ, բանիբուն անդամներից, առանց բացառութեան:

Անուրանալի է նոյնպէս, որ նրանք ամենքն էլ աշխատել են և աշխատում են դպրոցների ծաղկման և յառաջադիմութեան համար, նորանոր աղբիւրներ գտնելով, այլևայլ օգտաբեր ծրագիրներ մշակելով և այլն: Այնուամենայնիւ՝ իւրաքանչիւր տարի դպրոցների հաշիւները վերջացել են բացով—գեֆիցիտով:

Եւ եթէ չլինէր եկեղեցու 40,000 ուրլի մայր գումարը՝ մեր դպրոցները դեռ անցեալ տարւանից փակւած կը լինէին:

— Բայց պատճառ:

— Պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոգաբարձութեան: Թող ներւի ասել, անտեղեակ լինէին, մեր հասարակութեան բարոյական և նիւթական վիճակին հետ, նրա հոգեբանութեան, նրա տրամադրութեան հետ:

Դպրոցների վերաբացման հէնց սկզբից՝ հոգաբարձութիւնը իր անփորձութեան, իր ոգևորութեան մէջ այնքան առաջ գնաց, որ կարծեց թէ ինչոր տեսականօրէն խօսւում ու գրում է, գործնականօրէն էլ իրագործւում է: Հոգաբարձութիւնը կարծեց, որ Բագուն Ամերիկա կամ Զւեցերիա է, իսկ Բագուի հայերն էլ Ամերիկացի կամ Զւեցերիացի են, զարգացած, պարտաճանաչ, զիտակից:

Այդ մոլորութեան մէջ՝ հոգաբարձութիւնը ջնջեց կէս դարուց ի վեր մեր դպրոցական կեանքում ընդունւած րոշակադրամի հաւատուի, որոշեց ոչ միայն ձրի ուսում տալ աշակերտ-աշակերտուհիներին, այլ նաև ձրիաբար տալ նրանց հագուստ և դասական պիտոյքներ:

Արհամարեցան, փոտած, յետադէմ համարւեցան այն մտքերն ու կարծիքները, որոնք թէ ծխական ժողովներում և թէ մամուլում արտայայտւում էին՝ հոգաբարձութեան բռնած ընթացքի դէմ:

Թէ արդարև իր ընթացքը սխալ էր՝ հոգաբարձութիւնը, վերջ ի վերջոյ ինքն աստիճանաց թոշակի հաւաքումն սահմանելով, ձրի հագուստներ և դասագրքեր տալն վերացնելով, ուսուցիչները 75 ուրլի դասագինը 60 ուրլու իջեցնելով և այլն:

Եւ ի վերայ այս ամենայնի՝ մեր դպրոցները փակելու վտանգից դեռ ազատւած չեն: Եւ, մեր խորին համոզմամբ, չեն էլ ազատւիլ, քանի որ հոգաէարձութիւնը ձեռք չի քաշիլ մի ամբողջ համայնքի կրթական գործը իր ձեռքում սեղմելուց, կենդրոնացնելուց: Եւ իր բիւրօկրատիքան ձևի ու եղանակի գործունէութեամբ, վերջ ի վերջոյ, բանն այնտեղ կը հասցնի, որ Բագուի մէջ գոյութիւն ունենալուց կը դադարին ծուխ, ծխական համայնք,—ծխական ինքնուրոյնութիւն, ծխական ժողով և այն ամենը,

ինչ որ յատուկ է հայ եկեղեցու ոգւոյն, նրա կանոնին և ինչ որ նրա գոյութեան և պահպանութեան հիմունքն են կազմում:

Այժմ էլ լաւում է, և լաւում է հաստատ ազբիւրից, որ հոգաբարձութիւնը ձեռնարկել է մի նոր բիւրօկրատիք միջոցի՝ ծխական զպրօցներէ արգիւնքը շատացնելու, նրանց գոյութիւնը պաշտպանելու համար:

Ահա թէ բանն ինչունն է:

Եկեղեցիների չափաբերական մատեաններից հաւաքելով և ստուգելով թէ վերջին 10 տարւայ մէջ՝ որքան և ինչ տեսակ օրինակատարութիւն տեղի է ունեցել, հոգաբարձութիւնը վերցրել է միջին թիւը և ենթադրել է, որ, իւրաքանչիւր տարի, մօտաւորապէս այսքան ծրնունդ, պսակ և մահ է տեղի ունենում:

Յետոյ՝ և նրադրելով, որ այդքան օրինակատարութիւնից քահանաները կարող են ստանալ մի բուսականին խոշոր գումար, եկել յանգել է այն եզրակացութեան, որ եթէ քահանաներին ոռճիկ տրւի, — նրանց կատարած օրէնքներից գոյացած եկամուտով թէ նրանց ոռճիկը կը հոգացւի և թէ մի խոշոր գումար կաւելանայ զպրօցների ծախուց համար:

Եւ որպէսզի թէ մի կողմից քիչ փոք ծախուի քահանայից ոռճիկի համար և թէ միւս կողմից ծխերի անհաւասարութեան և յափշտակման

առթիւ քահանայից մէջ, երբեմն-երբեմն, տեղի ունեցած զժառութիւններն ու թիւրիմացութիւնները միանգամ ընդ միշտ վերանան, (այսպէս կարծւում է) հոգաբարձութիւնը որոշել է:

1) Մասնաւոր ծուխ ասած բանը վերացնել: Ամբողջ Բագրի հայ հասարակութիւնը ընդունել իբրև մի ծխական կառույց:

2) Այդ անգին (40,000 հոգուց բաղկացած) ծուխին հովելու համար՝ քահանաների թիւը իջցնել 8 հոգու, որոնք շաբաթական հերթապահութեամբ բոլոր ծէսերը կատարեն:

Այս բարդ հարցի մանրամասնութիւններն մշակելը թողնելով ապագայում առանձին յանձնաժողովներին, — հոգաբարձութիւնը սկզբունքով շատ հաւանել է իր արած այդ գիւտին և մտադիր է օրերումս մի յատուկ պատգամաւորութեան միջոցաւ՝ խնդրել վեհափառ կաթողիկոսի հաճութիւնը և թայլուութիւնը՝ յիշեալ հարցը մշակելու և դործադրելու:

Բագուի եկեղ. ծխ. զպրօցի հոգաբարձութեան այս ծրագիրը հրապարակ հանելով՝ մենք առ այժմ հրաժարւում ենք որևէ դիտողութիւն անել այդ առթիւ: Այսքանս միայն կատենք, որ աւելի լաւ կանէր հոգաբարձութիւնը, որ իր զարթեցրած հարցը մանրամասնօրէն մշակէր թէ իր մէջ, թէ յատուկ յանձնաժողովի և թէ ծխական ընդհանուր ժողովի մէջ և վերջնոյս հաւանութիւնը ստանալուց յետոյ՝ ապա

զիմէր Վեհափառին իրաւունք և թոյլաւութիւն ստանալու:

Երբէք չպէտք է զանց առնել, որ շատ և շատ լաւ սկզբունքներ կարող են գլուխ չգալ, կարող են անգամ քիստ առաջ բերել, եթէ որ այդ սկզբունքները մենք ձեռնարկենք իրագործելու՝ առանց մանրամասն և լուրջ, բազմակողմանի քննութեան և առանց ի նկատի անելու պետական, եկեղեցական և թէկուզ սովորութեան (обычае) օրէնքները:

Թարմ օրինակը մեր աչքի առաջն է:

Ոմանք բարեմիտ հայ մարդիկ հանգ. Մկրտիչ կաթողիկոսին համոզեցին և նա վեր կացաւ իր յայտնի սահմանադրական կոնդակներն ցրուեց ի սփիւռս աշխարհի:

Հետևանքը ամենքին քաջ յայտնի է:

Մենք միանգամայն անհրաժեշտ ենք համարում այս և այն բարեփոխութիւնը մտցնել հայ քահանայութեան մէջ, նրա և նրա ծխի յորաբերութեան մէջ: Անհրաժեշտ և խիստ ու ամեն կողմից օգտակար ենք համարում ծխական դպրոցը կապել եկեղեցու հետ. մենք մինչև անգամ այն համոզմունքի ենք, որ եկեղեցական դպրոցը պէտք է պահպանուի բացառապէս եկեղեցու արգիւնքներով:

Բայց եթէ եկեղեցու և նրա դպրոցի միացումը՝ հոգաբարձութեան առաջարկած, կամ

գրա նման այլ միջոցներով տեղի ունենայ, — այն ժամանակ մենք, ըստ առածին, յօնքը շինելու փոխարէն՝ աչքն էլ կը հանէնք:

1910 թ. Ապրիլ:

Ա.

Քահանաներին ոռճիկ տալու հարցը, — որքան յիշում ենք, մեր մէջ առաջին անգամ զարթեցրել է իր գրքերից մէկում՝ հանգուցեալ Արխատակէս եպիսկոպոս (Սեզրակեանը), թէև նրանից առաջ էլ, մեր լրագիրներում, ժամանակ առ ժամանակ, առաջարկներ ու ակնարկներ շատ են եղել: Սակայն՝ ինչպէս հանգուցեալ Արհին նոյնպէս և նրանից առաջ գրողները քահանաներին ոռճիկ տալու հարցը միմիայն շօշափել են, այն էլ շատ հարեացօրէն, շատ թուուցիկ կերպով: Նրանք ցանկացել են, և թէ քահանաների և թէ ժողովրդի համար խիստ օգտակար են համարել, որ մեզանում ևս վերջիններն, — քահանաներն՝ ոռճիկ ստանան:

Բայց թէ՛ ինչ բանի վրայ է հիմնւած այդ ցանկութիւնը, թէ՛ կարելի է արդեօք մեզանում էլ ոռճիկ սահմանել, ի՞նչ ազբիւրներից և ի՞նչ ձևով ու եղանակով, այդ մասին, որքան ինձ յայտնի է, մեզանում մի տող անգամ գրուած չէ, գոնէ ինձ պատահած չէ կարդալ:

Այսքանս լաւ եմ յիշում, որ սրբ. Արխատակէսի և նրա նախորդների ցանկութիւնը գլուխ

բերեց և իրականացրեց արժ. Մեսրոբ քահ. Մելեանց, Բաթումի տւազ քահանան: Եւ գլուխ բերեց շատ պարզ ու արագ ձևով: Նրա յորդորանքով Բաթումի հայ հասարակութիւնը համահասական կազմեց, նիւթական վիճակի համեմատութեամբ՝ միջանի դասակարգի բաժանեց ժողովրդին, յետոյ ամեն օրինակատարութեան համար սակագին, — տակսա որոշեց և այդ սակագնով ստացելիք հասոյթներով քահանաներին ուճիկ սահմանեց:

Սկզբում գործը լաւ էր ընթանում, բայց յետոյ՝ թուլացաւ: Եւ այժմ, ասում են, քահանաները դիմել են, ստիպւած են դիմելու, նախկին դրութեանը:

Ասում են նսանապէս, որ Թիֆլիզի եկեղեցիներից մէկում, ի շնորհս երեցփոխանի եռանդուն աշխատանքին, միաբաններին ուճիկ է սահմանւած Բաթումի ձևով, թէև տարբեր սակագնով:

Ամենայն հաւանականութեամբ՝ եռանդուն երեցփոխանի ձեռնարկութիւնը լաւ հետևանքի պէտք է որ հասած լինի: Եւ թերևս այդ հետևանքն է, որ անցեալ տարւայ վերջերին առիթ տւեց Թիֆլիզի քահանաներին միանալ և Վեհափառ կաթողիկոսի հաստատութեանը ներկայացնել իրանց մշակած կանոնները՝ քաղաքի բոլոր քահանաներին և դպիրներին ուճիկ սահմանելու վերաբերութեամբ:

Ինչպէս լրագիրները գրեցին՝ Վեհափառ քահանաների մշակած կանոնները վերադարձրեց նոր մէկանց մշակելու համար:

Ես չգիտեմ տեղի ունեցաւ արդեօք այդ մշակումը թէ ոչ: Միայն գիտեմ, որ Բաթումի և Թիֆլիզի օրինակը արձագանք գտաւ և մեր տիրապահ Բագում: Տեղւոյն եկեղեցական ծխական հոգաբարձութիւնը առաջին ձեռներէցն եղաւ այդ բանում: Եւ նախապէս ստանալով Վեհափառ Հայրապետի բանաւոր հաճութիւնը՝ ձեռնարկեց կանոնադրութիւն մշակելու՝ մի յանձնաժողովի ձեռքով, որ կազմւած էր հոգաբարձութեան և միաբանութեան անդամներից:

Մեղքս ինչ թագցնեմ՝ ես սկզբից ի վեր անհամակիր եմ եղել քահանաներին ուճիկ սահմանելու հարցին առ հասարակ: Հետևաբար անհամակիր եմ եղել նաև Բագւի եկեղ. ծխակ. հոգաբարձութեան ձեռներէցութեանը:

Այդ ձեռներէցութեան տութիւ ես մի նամակ էլ տպեցի «Հովիւի» № 39-ում անցեալ տարի: Այնտեղ հոգաբարձութեան մտադրութիւնը և այդ մտադրութեան շարժառիթը, դպրոցների ապահովութիւնը յայտնելուց յետոյ՝ ես պակասցնում էի, որ «առ այժմ հրաժարւում եմ իմ զիտողութիւններն առնելու»:

Պատճառը հասկանալի է: Կարող է պատահել, ասում էի ինքս ինձ, — որ ես, յիրաւի,

յետ եմ մնացել, և ժամանակի պահանջն ըմբռնելու ընդունակութիւնից զրկւել: Մինչևո՞ւ անհան թարմ, կրթւած ու զարգացած մարդիկ, որոնք համոզւած են իրանց ձեռներէցութեան յաջողութեան և օգտաւէտութեան մասին: Ինչի այժմեանից քար ձգել մի ձեռներէցութեան վրայ, որ թերևս կարող է լաւ արդիւնք արտադրել ինչպէս քահանայութեան, նոյնպէս և ժողովրդէն համար: Ինչի պղտորել կամ սառեցնել միտքն ու սիրտը այն մարդկանց, որոց հասկացողութեանը, եռանդին և բարեմտութեանը մասին՝ բնաւ կասկած կամ տարակոյս չունիս:

Եւ ես համբերեցի: Եւ անա յանձնաժողովի մշակած կանոնադրութեան նախագիծը Հոգաբարձութիւնը օրերումս ներկայացրեց հոգաբարձական և քահանայական խառն ժողովի ընհանուր խորհրդածութեանը՝ նախ քան ծխական ժողովի հաստատութեան ներկայացնելն:

Ի պաշտօնէ ներկայ և մասնակից լինելով խառն ժողովի խորհրդածութեանը՝ ես առիթ ունեցայ ծանօթանալ յանձնաժողովի խմբադրած կանոնադրութեանը, որ բաղկացած է 40 յօդւածներից:

Գնում եմ այստեղ կանոնադրութեան էական ամենապլլաւոր յօդւածների համառօտ բովանդակութիւնը:

Բայց նախ քան այդ՝ պարտականութիւն

եմ համարում յայտնելու, որ կանոնադրութեան տրամադրութեամբ ստացւելիք դրամներն՝ Հոգաբարձութիւնը յատկացրած է բացառապէս հոգևորականների պարբերաբար ոռձիկների հատուցման և ապագայ ֆօնդի կազմւելուն, այլ ոչ թէ՛ նաև դպրոցների օգտին, ինչպէս որ ես գրել էի «Հովիւ»-ում տպագրւած նամակումս:

Երևի այն ժամանակ՝ ինձ հասած տեղեկութիւնը սխալ է եղել և ինձ էլ սխալեցրել: Եւ կամ գուցէ Հոգաբարձութիւնը իր նախկին մտադրութիւնիցը այժմ յետ է կանգնել: Եւ եթէ այդպէս է, իմ կարծիքով՝ նա սխալւել է: Վասնզի եթէ հոգաբարձական առաջարկի յաջողութեան մասին որքան և իցէ շննս կայ, դա մեր դպրոցների նիւթական վիճակի ապահովութեան խրնդիւրը պէտք է որ լինի:

Առանց դպրոցների ապահովմանը նպաստելու, այլ լուի հոգևորականութեան վիճակը ապահովելու կամ կարգաւորելու համար, չարժէք, իմ կարծիքով, այսքան երկար ժամանակ և այսքան աշխատանք ու ժամանակ վատնել: Նա մանաւանդ որ հոգևորականութեան վիճակի այդ ձևի ապահովութիւնը, իմ աչքում, ինքնախաբուլթիւն է: Եւ այդ ձևի կարգաւորութիւնը՝ անկարգութիւնների աղբիւր և դուռ: Մենք այդ կը տեսնենք, սիրելի ընթերցող, կանոնադրութեան հետ ծանօթանալուց յետոյ:

Ուրեմն դառնանք կանոնադրութեանը:

Բ

Ահա այդ կանոնադրութիւնը.

1) Բազմի բոլոր հայ համայնքը կազմում է մի ծուխ, իսկ բոլոր քահանաները հերթապահութեամբ անխափր կատարում են բոլոր հոգեւոր պէտքերը:

2) Ամեն մի օրինակատարութեան և ծխակատարութեան համար որոշում է սակագին, որից աւելին ստանալը՝ թողնում է Դիւանին:

3) Դիւանի անդամներն են՝ գործակալը, մի քահանայ, երեցփոխը, հոգաբարձութեան և թեմական խորհրդի անդամներից մի մի մարդ: Ուրեմն հինգ հոգի:

4) Ծէս ունեցողը ղեմելու է Դիւանին, վրձարելու է սակադնով որոշած տուրքը և ստանալու է անգորրագիր: Այդ անգորրագիրը նա ներկայացնելու է հերթապահ քահանային, որը պարտական է կատարել ծէսը:

5) Քաղաքի քահանաների թիւը առ այժմ լինելու է 8 հոգի, որոց իւրաքանչիւրը ստանալու է 3000 ուլբի ուճիկ: Դպիրներն ստանալու են 900-ական ուլբի:

6) Քաղաքի արուարձանների հոգևորականութեանը չեն վերաբերում այս կանոնները:

Նրանք իրանց ժողովուրդներին հովելու են նախկին ձևով:

7) Եղած 8 քահանաների թւի վրայ նոր քահանայ աւելացնելու և կամ վախճանած քահանայի փոխարէն նորը ընտրելու մասին նախկին հոգացողութիւնը կատարում է Վարչութիւնը կամ Դիւանը, որ իր ընտրած թեկնածուներին առաջարկում է ընդհանուր ծխական ժողովին:

Ընդհանուր ծխական ժողովը, — ծանօթութեան մէջ ասւած է, — բացի Դիւանի առաջարկած թեկնածուներից՝ ինքը ևս կարող է իր կողմից նոր թեկնածուներ առաջարկել:

8) Դիւանը իրաւունք է վերապահում իրան ըստ հարկին այս կամ այն քահանային յաւելեալ ուճիկ (лично присвоенное) նշանակելու խնդիրը յարուցանել և առաջարկել ծխական ժողովի հաստատութեանը:

9) Վերջապէս և ահա տուրքերի քանակը.

ա) Մանկահասակ ննջեցեալի (մինչև 10 տարեկան) թաղման համար 3 ո.:

բ) Չափահաս ննջեցեալի թաղման համար առանց պատարագի և մի քահանայով 5 ո.:

գ) Չափահաս ննջեցեալի թաղման համար՝ պատարագով և երկու քահանայով 25 ո.:

դ) Երկուսից աւելի քահանայ պահանջող

ննջեցեալի տէրը՝ մէն մի յաւելեալ քահանայի համար պէտք է վճարէ 5 ական ուրբի:

ե) Կիւրակէ օրերում կատարելիք հոգեհանգստի համար ներկայ եղող քահանաների մասնակցութեամբ 15 ու:

զ) Լի օրերում կատարելիք հոգեհանգստի համար 3 քահանայից մասնակցութեամբ 25 ու:

է) Իսկ եթէ ամբողջ քահանայական դասն է մասնակցելու 50 ու:

ը) Լի օրերը առաւօտեան ժամին կից կատարելի հոգեհանգստի համար մէկ քահանայով 10 ուրբի:

թ) Մկրտութեան համար 4 ու:

ժ) Նշանադրութեան համար 10 ու:

ժա) Պսակի համար՝ հարսնացւից և փեսացւից 20 ու:

ժբ) Տնօրհնէքը ստմարով, որի մէջ տանտէրը պէտք է նշանակէ իր տւած գումարը քահանային:

ժգ) Գերեզմանօրհնէքի մասին վերջնական եզրակացութեան չի հասել հոգաբարձութիւնը, ուստի և գերեզմանօրհնէքի տուրքի ստացումը կամ յատուկ տուժարով, կամ մի այլ եղանակով, թողած է ծնական ժողովի որոշմանը:

Հոգաբարձական այս կանոնադրութեամբ՝ ինչպէս տեսնում է ընթերցողը՝ մեր եկեղեցու հիմնական կարգ ու կանոններն տակն ու վրայ

են լինում: Եւ առաջարկում են այնպիսի կարգ ու կանոններ, որոնք ոչ բարոյական հիմք ունին, ոչ էլ օրինական:

Վերցնենք, օրինակի համար, հէնց առաջին կանոնը, որով 40000 հոգուց կազմւած մի ահազին հայ հասարակութիւն համարում է մի ծուխ, կամ մի ծխական համայնք:

Մինչդեռ մեր վերջին կաթողիկոսի—Սըրկրտիչ Առաջնի կանոնադրութեամբ (մի կողմ թողած միւսները) և հէնց առաջին յօդւածով՝ «Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի ամեն մի նայ եկեղեցու կամ աղօթատան բոլոր ծխականները միաբան հոգևոր պաշտօնեաների հետ միասին՝ կազմում են մի ծխական հասնայնի»:

Եւ այդ համայնքի իրաւասութեանն են կենթարկում այն ամեն գործերն, որոնք մի առ մի թւած են նոյն կանոնադրութեան 17 յօդւածի ա—ժբ պարբերութիւններում:

Հոգաբարձութեան որոշումը հիմնւած է այն բանի վրայ, որ Բագում ընդամենը երեք եկեղեցի կայ և ժողովուրդը ամենամեծ մասամբ մի եկեղեցին—Ս. Լուսաւորիչն յաճախում և այնտեղ կատարել տալիս իր կրօնական պաշտամունքները:

Հոգաբարձութեան այս առարկութիւնը ճիշտ է: Բայց դա պատճառաւ չէ կարող լինելու եկեղեցու հիմնական կանոնը խախտելու:

Նամանաւանդ որ մի երկու տարուց յետոյ՝ արեւելքն պատրաստ կը լինի Բագւի և չորրորդ՝ եկեղեցին: Բացի դրանից՝ Բալախանի շօտէ և Սպիտակ քաղաք կոչւած թաղամասերում արեւելքն եկեղեցիների համար տեղեր են տւել քաղաքը և հանգուցեալ Ռաֆայէլ Պապովը: Բալախանիի համար էլ ինչպէս անդ, նոյնպէս և 20000 ուրբ. դրամ է յատկացրած նաւթարդիւնաբերողների խորհուրդը (СОВѢТЪ СѢБѢДА НЕФТЕПРОМЫШЛЕННИКОВЪ):

Եւ այդ ամեն տեղերն ու դրամներն եկեղեցիներ կառուցանելու համար՝ ոչ երեկ են յատկացրած եղել և ոչ էլ այսօր, այլ քանիքանի տարիներ առաջ: Ամենից նորը՝ մի տարուց աւելի է դարձեալ:

Սակայն դրանց մասին ոչ խորհող կայ և ոչ էլ գործող: Հոգևոր իշխանութիւն կոչւած մարմիններն մեր թեմում ընդհանրապէս, և Բագւում մամնաւորապէս, այդպիսի գործերի համար, որ ուղղակի իրանց է վերաբերում, ժառը մատին խփելու ոչ ցանկութիւն և ոչ էլ ընդունակութիւն են ցոյց տւել, կամ ցոյց են տալիս:

Ժողովուրդն էլ, ի դէմս հոգաբարձութեան, հոգևոր իշխանաւորների այս աստիճան քարացած անտարբերութիւնը տեսնելոյ, սկսում է իր խելքի կտրածն անել: Եւ անում է միանգամայն բարի և ազնիւ ղիտաւորութեամբ:

Սակայն ժողովրդի և նրա ներկայացուցիչների բարեմտութիւնն ու ազնւամտութիւնը ընդունելով հանդերձ՝ անկարելի է անուշաղբի թողնել այն անկանոնութիւններն ու անկարգութիւնները, որ մարդիկ, հակառակ իրանց կամքի, մտցնել են ուզում մեր եկեղեցում:

9.

Շնորհիւ երկար տարիներից ի վեր ընդունւած խիստ կենդրոնացման սխտեմին, որ, կըրկնում ենք, հիմնովին հակառակ է հայ եկեղեցու ուղղութեանը, ոգուն, — Բագւի հայ հասարակութեան ազգային-եկեցական գործերը միշտ և հանապազ սեղմւած, կենդրոնացած են եղել միքանի մարդկանց ձեռքին, այլևայլ պաշտօնական տիտղոսների տակ, — աւագ քահանայութիւն երեսփոխանութիւն և հոգաբարձութիւն:

Եւ ես փաստեր ունիմ, որ ճէնց այդ կենդրոնացման երեսիցն է, որ Բագւում այսքան քիչ եկեղեցի և դպրոց կայ, որ այդ եկեղեցիներից՝ նոյնիսկ մայր եկեղեցին ոչ փոքր ի շատէ աչքի ընկնող կտլւածք ունի և ոչ էլ դրամագլուխ:

Եւ մինչդեռ Բագւի հայ հասարակութիւնը ուրիշ տեղերի համար մի կթան կով է եղել տեղական ազգային-եկեղեցական հիմնարկու-

31730



թիւներն՝ միշտ և հանապազ մնացել են ևեղձ, անապահով, անտէր ու անխնամ:

Որովհետև ծխական, համայնական և ինքնուրույն գործունէութիւնը, մրցութիւնը յետ է մզել և նրա հանդէպ պատուար է հանդիսացել կենդրոնականութիւնը, — բիւրօկրատիզմը, որ գործերը վարել է այսպէս, ինչպէս միայն ինքն հասկացել է ու ցանկացել:

Այդ բիւրօկրատիզմը գէթ մասամբ խորտակելու համար՝ 1893 թւին քաղաքիս քահանաներին յաջողեցաւ ժողովուրդը վերածել ծխական համայնքների ըստ թւոյ քահանայից: Եկեղեցիների սակաւութիւնը չէր կարող արգելք լինել ծխաբաժանութեան: Շիշտ է, ծուխը եկեղեցուն է այլ ոչ քահանային, բայց եթէ շատ ու շատ յարգելի և օրինաւոր պատճառներով՝ միևնոյն եկեղեցու միաբանները իրանց հովուութեան որոշ շրջանը կամ ծխի որոշ թիւն ունեցան, դրանով այդ բոլոր շրջանի մարդիկ նոյն եկեղեցու ծուխը լինելու իրաւունքից հօ չեն զրկոււմ: Եւ որպէսզի քահանաները լոկ ծխակատարներ չբնան, այլ նաև իրանց պաշտօնին յատուկ հասարակական-եկեղեցական պարաքերն ևս կատարելու հնար ունենան, քաղաքիս հայր գործակալի միջոցով՝ քահանայք դիմեցին հանգուցեալ կաթողիկոսին խնդրելով, որ ինչպէս ծխական ժողովներ կայացնելիս, նոյնպէս և ծխական այս ու այն հարցը վճռելիս՝ Բագրի հայ հասարակու-

թիւնը վերցնել ոչ թէ ըստ թւոյ եկեղեցիների, այլ ըստ թւոյ ծխական քահանաների:

Սրբիմեան Հայրիկը քահանաների խնդիրը յարգեց և գործակալին արտօնել էր այսպէս վարւել այսուհետև:

Սակայն հայրապետական այդ կարգադրութիւնը չկամեցան գործադրել՝ առաջնորդը և հոգաբարձութիւնը:

Սրբազան առաջնորդը չկամեցաւ հոգաբարձուների խաթրին կպչել: Հոգաբարձուներն էլ՝ չկամեցան իրան սիրելի բիւրօկրատիքական արտօնութիւնից ձեռք քաշել:

Եւ անհա ի լրումն այդ բիւրօկրատիքական ձգտման ու գործունէութեան՝ յանկարծ հանդէս է գալիս քահանաներին ոռճիկ սահմանելու կանոնադրութեան նախագիծը, որով յարգելի հոգաբարձութիւնը, — անշուշտ հակառակ իր ցանկութեան, — ուզում է հայ ժողովրդավարական եկեղեցիին՝ կղերական եկեղեցու վերածել, իսկ նրա ժողովրդական և ժողովրդին ենթարկած սպասաւորներից՝ Փարաշաւոր յիկոնիսիական մի դասակարգ կազմել ժողովրդի զլխին:

Եւ, յիբաւի, չինովնիկութիւն, անպատասխանատու, աւտօմատիկ չինովնիկութիւն, ուղղակի կвартальный надзиратель-ութիւն չէ միթէ, երբ հայ քահանան ստիպւած պէտք է

լինի առաւօտից մինչև երեկոյ, գուցէ մինչև կէս գիշեր, ժամի բազում սպասել, որպէսզի Դիւանի անդորրագրերն ստանալիս՝ գնայ ու այս կամ այն ձէսը կատարէ:

Բացի այն, որ մի հերթապահ քահանայ ֆիզիքապէս անկարող է 40000 հոգուց բաղկացած մի համայնքի ձեւերը կատարելու հասնել և ստիպւած է լինելու շարունակ իր ընկերներին օգնութեան կանչելու, բացի այդ, — ասում եմ ես, — քահանան լիակատար իրաւունք ունի չեւրարկի այդ նորահար Դիւանի իրաւասութեանը, չնանայել նրան: Վասնզի Դիւանի գրութեանը ֆունկցիան, — տուրքերի հաւաքումը, միանգամայն հակառակ է ինչպէս հայ եկեղեցու իրականացնելու կրօնական, նմանապէս և 1836 թւականի «Պօթեանիային» որով մինչև օրս կառավարւում է մեր եկեղեցին:

Պէտք է գիտենալ, որ քահանան բացի այն բարոյական պարտականութիւններից, որ ունի, գոնէ անշուշտ պիտի ունենայ, դէպի իր հօտը, նա ունի և որոշ պարտականութիւն և պատասխանատւութիւն օրէնքի առաջ, թէ եկեղեցական և թէ պետական օրէնքի առաջ:

Եւ եթէ քահանան իր այդ պարտականութիւնների վերաբերութեամբ թերացաւ, նոյնիսկ եթէ նա սխալեց, Դիւանը չէ կարող ազատել նրան պատասխանատւութիւնից:

Ուրեմն քանի կապէկ արժէ այդ Դիւանը, քանի որ նրա գոյութիւնը օրինաւորապէս չի ընդունւիլ: Իսկ ընդունել չէ կարող, որովհետեւ ինչպէս ասացի, նրա ֆունկցիան հակառակ է կանոնին և օրէնքին:

Դարձեալ՝ իբրև օրէնքով ճանաչւած պաշտօնական անձն՝ քահանան, նամանաւանդ Բագում, խիստ յաճախ մեծ ու փոքր ժողովութիւններ է մատուցանում իր ծխական ժողովրդականներին այլևայլ բանաւոր վկայութիւններ և դրաւոր վկայականներ տալով նրանց՝ ուրիշ տեղերում պակասելու համար, անցաթուղթ ստանալու համար, վարք ու բարքի համար, ժառանգական իրաւունքներն հաստատելու համար, անունների և ազգանունների փոխւած լինելու համար և այլն:

Եւ այս ամեն ծառայութիւնները քահանան մատուցանում է իր ծխականներին, որովհետեւ նա նրանց ճանաչում է անձամբ, նրանց իւրաքանչիւր ընտանեկան և անւանական ժանրամասն ցուցակը իր մօտ ունի, նա նրանցից շատերի աներում տարէնը մի քանի անգամ լինում է, եթէ ոչ այցելութեան, գէթ այս ու այն օրինակատարութեան համար, իսկ բոլոր ծխականների աները լինում է անշուշտ տարերը երկու անգամ, Զրօնէնքին և Զատկին, տրնօրհնէքի համար:

Վերջրէք ծուեր և այնուհետև ոչ մի քա-

հանայ չի համաձայնիլ վերոյիշեալ ծառայութիւնները մատուցանել ժողովրդին: Եւ ինչպէս կարող է նա այս ու այն վկայութիւնն ու վկայականը տալ այն մարդկանց, որոնց չէ ճանաչում, որոնց երեսը գուցէ տեսած էլ կարող է չլինել: Այժմ՝ երբ իւրաքանչիւր քահանայ իր ծուխն ունի, դարձեալ ժամանակ առ ժամանակ խաբւում է և փորձանքի մէջ է ընկնում. իսկ երբ ծուխը վերացաւ, յայնդէպս քահանային ուրիշ ոչինչ չէ մնում անել, եթէ ոչ ամեն շաբաթ և ամեն ամիս դատաստանական քննչին մօտ դնալ իբրև մեղադրեալ բացաարութիւն տալու, օրինակի համար, թէ ինչու այն ինչ ուղղափառ, թէև սզգաւ հայ, մօր կամ հօր երեխին մկրտել է, ինչու այս ինչ կին կամ մարդ ունեցողին՝ նորից պսակել է, ինչու այս ինչ անցաթղթի կեղծ լինելուն պատշաճաւոր վերահասութիւն չէ գործել, ինչու մի եղբօր կնոջից ծնած երեխին միւս՝ գաւակ չունեցող՝ եղբօր և նրա կնոջ անուանով է մկրտել և ոչ հարազատ հօրն ու մօրն անուանով, և այլն և այլն:

Պէտք է մօտից ճանաչել Բագուն և նրա «Եթմիշիքի միլլէթ»-ից կազմած հայ հասարարակութեանը, որպէսզի հասկացուի թէ ինչ է նշանակում առանց յատուկ ծուխի քահանայութիւն անել մեր ժամանակի այս Բաբելոնում:

Էլ չեմ խօսում այն մասին, որ մասնաւոր

ծխերի վերացմամբ՝ կը վերանայ և իսպառ կը խզուի և այն բարոյական կապը, որ լաւ թէ վատ, այսօր կայ հայ ժողովրդի և նրա քահանայի մէջ, իբրև եկեղեցու սպասաւորի, պաշտօնէի մէջ:

Չնայած այս ու այն խոչնդոտ հանգամանքներին: ու պատճառներին, այդ բարոյական կապը այնուամենայնիւ կայ՝ նամանաւանդ, հասարակ, բազմամարդ դասակարգի մէջ: Եւ կայ սրտանց, անկեղծօրէն: Կայ նոյնպէս և ինտելիգենտ դասակարգի մէջ ևս, թէև առ երեսս, աւանդաբար:

Այս ամենը ի նկատի առնելով՝ ես գտնում եմ, որ մեր եկեղեցական-ծխական հոգաբարձութիւնը, ոչ էլ նմանապէս ծխական ժողովրդ, իրաւունք և արդարութիւն չափտի համարեն աւանձին ծխերն վերացնել և ահագին քաղաքի ահագին բազմութիւնը մի ծխական համայնք համարել:

Դառնում եմ կանոնադրութեան երկրորդ յօդուածին:

Հոգաբարձութեան նախագծի երկրորդ զրլխաւոր կէտն է՝ սակագինը, որ բաւականին մանրամասն կերպով որոշւած կամ սահմանւած է ամեն մի օրինակատարութեան համար:

Շատ հեռուն կը տանէր, ու գուցէ ընթերցողին էլ հետաքրքիր չլինէր, եթէ ես կանգ առ-

նէի երկայն-բարով բացատրելու կրօնական այն տեսակէտը, որով եկեղեցու խորհուրդներէ բաշխման կամ կատարման համար սակազին որոշեն և սակազնով կատարելն՝ կրօնական այդ գաղափարն հիմն ի վեր տապալել է նշանակում: Իսկ այդ տապալումը՝ շատ ծանր, շատ վիրաւորական ազդեցութիւն կունենայ հաւատացեալի զգացմունքներէ, նրա կրօնական հայեացքի վրայ:

Այս, այդ մասին ես չեմ ուզում խօսել, ես միայն այս եմ ուզում ասել, որ հայկական եկեղեցու հիմնական կանոնով, օրինակատարութիւնների համար սակազին նշանակելն և սակազնով կրօնական պաշտմունքներ կատարելն՝ իոսիա արգելած է: Ի հաստատութիւն ասածիս՝ բերում եմ այստեղ միքանի կանոններ, որոնք քաղած են մեր վերջին հայրապետների կանոնական կոնգակներէից կամ հրահանգներից:

1) Ներսէս Շնորհալին գրում է՝ «Մի ոք ի քահանայից ըստ հարկի պահանջեսցէ զգինս արծաթոյ՝ անգին շնորհի վասն մկրտութեան, կամ մահու և հաղորդ տալոյ, այլ որ ունին և տան (այսինքն՝ ով որ ունի և տալիս է) որպէս ներ եկեղեցոյ՝ առնել: Եւ որ ազքատ լինին՝ մի բռնադադել»: (Կան. 23):

2) Ներսէս Ե. Աշտարակեցին գրում է՝ «Մի իշխեսցեն քահանայք վասն որպիսի և իցէ օրինակատարութեան, այն է՝ վասն մկրտու-

թեան, պսակի կամ թաղման ի մէջ եկեղեցոյ պահանջել զնէրս եւ զվարձս, այլ արտաքոյ եկեղեցոյն՝ խոյր եւ յորդոր քակիս՝ առանց բռնադատութեան ընկալցին զխաւառ նէրս և շնորհակալութեամբ օրհնեսցեն զաւող նւիրակսն» (Կան. 18):

3) Գէորգ Գ. գրում է՝ «Քահանայք մի նեղեսցեն զժողովուրդս զօշաքաղութեամբ *) եւ զեր քան զչափն քրատական պահանջողութեանք վասն որով եւ իցէ օրինակատարութեանց, այլ կթել զկաթն զի եղիցի իւր, և ոչ ճմլել զգալունսն, զի մի ելցէ արիւն, այլ զոր ինչ քան սիրով՝ առնուցուն, իսկ զաղքատս՝ մի բռնադատել» (Կան. 72):

4) Նոյն Գէորգ Գ-ը աւագ քահանաների համար սահմանած կանոններում գրում է՝ «Աւագ քահանայն պարտի զգուշացուցանել զքահանայս և գարկաւագունս ի զօշաքաղութենէ, եւ մի նեղեսցին եւ զգունցուցեն զժողովորդն պահանջմանք ոռատել քան զչափն սործարոյ կաւ այլ սոց եւ մի տակարկեսցեն (չեշտում է կաթողիկոսը) վասն կատարման ս. խորհրդոց մկրտութեան, պսակի, ս. պատարագի և թագման և այլն» (Կան. 45):

Իսչպէս տեսնում է ընթերցողը՝ այս կա-

*) Չօշաքաղութիւն՝ նշանակում է ազանութիւն, ծակաչքութիւն:

նոները բացարձակաբար մերժում, խոտում են սակագինը:

Այս ևս ես պէտք է յայտնեմ իմ ընթերցողներին, որ վերոյիշեալ կանոնները՝ նրանց սահմանող հայրապետների իրանց սեփական հեղինակութիւնը չէ, այլ համազգային ժողովների կանոններից քաղած, կամ նրանցից հանած ու լուսարանւած:

Որովհետեւ, մեր եկեղեցու հիմնական օրէնքով, կաթողիկոսը՝ ինքնազուլիս իրաւունք չունի որևէ կանոն սահմանել եկեղեցու համար:

Հայ եկեղեցու՝ ինչպէս դաւանաբանական, նոյնպէս և իրաւաբանական կանոններ սահմանողները՝ (երեք աիեգերական ժողովներից յետոյ) եղել են մեր հաւազգային ժողովները:

Կաթողիկոսները այդ կանոնների աւանդապահն են եղել միմիայն և նրանց գործադրիչը, ուրիշ ոչինչ:

Հակառակ դէպքում, այսինքն կաթողիկոսների իրանց իրաւանց սահմաններից դուրս եկած ժամանակ, համազգային ժողովը՝ նրանց՝ իրաւագանց կաթողիկոսներին գահընկեց կանէ, ինչպէս և, ժամանակ առ ժամանակ, արել է:

Համազգային ժողովներով սահմանւած կանոնների աւանդապահը և նրանց վրայ հսկող ու

գործադրող լինելով հանդերձ՝ մեր կաթողիկոսները իրաւունք ունին այդ կանոնները լուսարանել, պարզաբանել հաւատացեալներին, կարող են այդ կանոնների մէջ այս ու այն ձևական փոփոխութիւնը մտցնել: Նրանք այդ կարող են անել նայելով ժամանակին և հանգամանքներին:

Բայց կանոնների ետքիւնը, ոգին փոխել, — բնաւ կարող չեն: Այդպիսի իրաւունք հայ ժողովրդական եկեղեցին երբեք տւած չէ իր Պետին, — կաթողիկոսին:

Միտքս մի օրինակով պարզեմ:

Համազգային ժողովների կանոնով՝ խոստովութեան և հաղորդութեան համար՝ ոչ մի կերպով և ոչ մի անունով ու ձևով կարելի չէ ժողովրդից վարձ, նւէր կամ որևէ փոխարկնութիւն ստանալ:

Եւ կաթողիկոսը՝ ինչ հայեացքի և ուղղութեան աէր էլ որ լինի, որքան էլ թերևս յարգելի ու զօրաւոր պատճառներ և հիմունքներ ունենայ, այդ կանոնը փոխելու, կարող չէ փոխել: Ամենաշատը ինչ որ նա իրաւունք ունի անելու հաւաքել այդ պատճառներն ու հիմունքները և նրանց համազգային ժողովի առաջ դնել՝ նրա վախճանական որոշմանը:

Դարձեալ՝ տասնևեօթներորդ դարում կայացած մի ժողովով՝ սահմանւած է, որ իր ընկերի ծուխն ու հասոյթը յափշտակող քահանան՝

«ըռծցի ի կարգեն» այսինքն՝ կարգալոյժ լինի: (Կան. 11):

Սա մի խիստ, շարաշար խիստ կանոն է:

Բայց կանոն է, որ անշուշտ ունեցել է իր գորաւոր պատճառներ:

Սովկայն երկու հարիւր տարւոյ ընթացքում՝ գողութեան կամ յափշտակութեան մասին հաւատացեալների հայեացքը բաւական մեղմացել է, ուստի և ներսէս Ե-րդ հնարաւոր և ներելի է համարում, որ յափշտակող քահանան կորզալոյժ չլինի, այլ տեղափոխի ուրիշ տեղ: Նա ասում է՝ «քահանայն մի իշխեսցէ յափշտակել զծուխս այլոց քահանայից, որ չեն վիճակեալ նմա յեպիսկոպոսէն իւրմէ: Եթէ որ յանդգնեսցի առնել՝ այնպիսին փոխեսցի արձախոյ ի բնակորթեն իւրմէ յայլ քաղաք կամ գիւղ»: (Կան. 76):

Գէորգ Դ-րդ առանց յափշտակող քահանայի պատժի ձևի մէջ փոփոխութիւն մտցնելու, պատելիքում է աւագ քահանային «միտ դնել՝ զի մի քահանայք յափշտակեսցեն զմիմիեանց ծուխ՝ կատարելով զպաշտամունս նոցա» (Կան. 32): Այսինքն Գէորգ Դ-րդ կրկնում է էջմիածնում տեղի ունեցած 8-դ ժողովի ժա. կանոնը՝ «երիցունք մի յափշտակեսցեն զվիճակա»: Միայն թէ՛ Գէորգ Դ-դ այդ կանոնի պահպանութեան հսկողութիւնը յանձնում է աւագ քահանային:

Այժմ դառնանք պետական օրէնքին:

1836 թւի մարտի 11-ին Հայոց եկեղեցու կառավարութեան համար սահմանւած «Պօլօթենիայի» 1248 յօդւածը ասում է՝ «հոգևոր պէտքերը կատարելիս՝ (հոգևորականութեան) ստացած սուրքերը, որոնք են՝ սուն փարատէքի համար 20 կ., պսակի համար 40 կ., մեծի թագման համար 40 կ., իսկ փոքրի համար 20 կ.: Հայոց եկեղեցու հոգևորականներին խոսիւ արգելում է որևէ պատճառանքով պահանջել հոգևոր պէտքերի կատարման համար՝ այս յօդւածում նշանակւածից արեւի տարի»:

Ըստ երևոյթին «Պօլօթենիան» ուրեմն սակազին որոշել է հոգևոր պէտքերի կատարման համար:

Եւ որովհետև, — ասում են սակազնի պաշտպանները — 1248 յօդւածով որոշւած սակազինը՝ միանգամայն անհամապատասխան է ժամանակիս պահանջներին, ուստի այժմ կարելի է նոր սակազին սահմանել: Կարելի է գները շատ կամ քիչ բարձրացնել: Հէնց բանն էլ դրանումն է, որ չի կարելի: Որովհետև «Պօլօթենիայի» հետեւեալ 1249 յօդւածն ասում է՝ «Հայոց եկեղեցու սրբազնագործ և սպասաւորող հոգևորական»:

ները իրատուիք յունիս 1248 յօդւածում յիշած տուրքերի շտաւուն համար՝ հրաժարել պաշտամունքներն կասարեւոյ եւ կամ ուշացնել: Նրանք միայն կարող են խնդրել կոնսիստորիային՝ պահանջելու այդ տուրքը մարմնուոր իշխանութեան ձեռով *):

Այս յօդւածից ես հետեացնում եմ, որ 1248 յօդւածով որոշւած սակագինը ժողովրդին չհեղացնելու կամ նմանողութեան **) համար է և աւողի համար պարտադիր չէ: Ոչ էլ շտապողի համար առիթ օրինակատարութիւնից հրաժարւելու կամ ուշացնելու: Նշանակում է, որ յօդւածի տուրքերն ևս կամաւոր են: Եւ ուրեմն մեր համազգային ժողովներով և Հայրապետական հրահանգներով սահմանւած կանոններին հակառակ չեն, գոնէ նրանց չեն ջլատում, չեն ոչնչացնում: Մանաւանդ երբ ի նկատի առնենք որ «Պօլօթենիայի» խմբագրողները այդպիսի դէպքերում միշտ և հանապազ առանձին իմն

*) Համազգային միքանի ժողովների կանոններով խստիւ արգելւած է թէ հոգևորականներին և թէ աշխարհականներին եկեղեցու վերաբերեալ որևէ գործի կամ վէճի ժամանակ՝ մարմնուոր իշխանութեան զիմելը: Դիմող հոգևորականութիւնը իսկոյն կարգալոյծ պէտք է լինի, իսկ աշխարհականը՝ բւնադրուի:

**) Ռուսաց եկեղեցին նոյնպէս որոշ սակագին սահմանած ունի 1248 յօդւածում յիշւած օրինակատարութեանց համար: Եւ նրանց սակագինը մերիցը փոքր է, քիչ է:

փափկանկատութեամբ են վերաբերւել դէպի հայ եկեղեցու նախնական, աւանդական կանոններն ու կարգերը: Եւ միքանի անգամ շեշտել են այդ մասին:

Այժմ գառնանք այն հարցին, որ եթէ հայ եկեղեցին կրօնական պաշտամունքների կատարման համար սակագին չէ որոշել և չէ թոյլատրել, հապա ինչով են ապրել հայ հոգևորականները:

— Ժողովրդի, հաւատացեալների կամաւոր տարիերով, պատասխանում եմ ես:

Այդ տուրքերն սկզբներում եղել են բնական բերքերով (натурой), շարժական և անշարժ գոյքերով ու մեծ ու փոքր արդիւնաբեր կալւածներով: Ապա հետագետէ վերածւել են դրամի: Սակայն միշտ կամաւոր, միշտ անորոշ, միշտ առանց սակագնի:

Եւ այդ ամեն աեսակի նւէրներն եղել են յանուն եկեղեցու, որ ապա մասնատրել է իր պաշտօնեաներին այն չափերով ու քանակով, որոնց որոշել են համազգային ժողովներն:

Մեծին Ներսէսի հիմնած բազմաթիւ և բազմատեսակ բարեգործական հիմնարկութիւնների պահպանման համար, ի միջի այլոց որոշւած էր առասնորդ ստանալ ժողովրդից:

Տասանորդի այդ տուրքը, որ համապատաս-

խան է մեր այժմեան դպրոցների օգտին նշանակած ծխական տուրքին՝ պարսառուսկիսն եր ժողովրդի հաճար սրովհետև Աշտիշատի համագրային ժողովն էր սահմանած: Իսկ այժմեան ծխական տուրքը ժողովրդի համար պարտաւորական չէ, այլ միմիայն յօժարութիւն կամ հաւաճայնութիւն տուողների համար: Եւ այդ է պատճառը, որ այդ տուրքը չէ հաւաքուում: Իսկ հաւաքուածն էլ արեւոտականօրէն, խաթրի համար է լինում:

Հոգևորականութեան օգտին՝ մեր եկեղեցին պարասողիւր տուրք երբէք սահմանած չէ: Այլ նա իր պաշտօնետաներին պահել է պահպանել է 1600 տարիներից ի վեր, իր կամաւոր տուրքերով, իր նւէրներով:

Բայց այդ կամաւոր տուրքերի տւչութեան պարտականութիւնը՝ հայ ժողովրդի մտքում ու սրտում այն աստիճան խոր արմատ ու բռնկւ, որ նա այդ տուրքը տալիս է ինքնաբերաբար, սրտով, յօժարութեամբ՝ աւելի քան որևէ այլ պարտագիր տուրք:

Եւ եթէ դուք ուզում էք որ ազգի կըթական և բարեգործական հիմնարկութիւններն իրանց գոյութիւնը շարունակեն, մինչև իսկ նրանց գոյութիւնը ապահովի, աշխատեցէք ամեն կերպ աշխատեցէք ժողովրդեան մէջ գիտակցութիւն, բարոյական պարտաճանաչութիւն առաջ բերել և աճեցնել ու դարգացնել հետզհետէ:

Ուզում եմ ասել թէ՛ հոգևորականութիւնից օրինակ վերցրէք, նրանց շաւղովն ընթացէք:

Հոգևորականութիւնը առանց օրէնքի, առանց պահանջման ու ճնշման, առանց սակագնի կարողացել է համոզել, հասկացնել ժողովրդին, որ նա պարտաւոր է իր կամաւոր տուրքերով իրան հոգևորականներին պահել: Եւ նա, ժողովուրդը պահում է: Արդէն նրա մէջ միս և արիւն է դարձել այն միտքը, որ հոգևորականը իր կաւարած գործերի, իր ծառայութիւնների համար անշուշտ պիտի վարձատրուի: Եւ ինչպէս տուացի, վարձատրուում էլ է:

Մի տեղ ժողովուրդը նրան վարձատրում է բնական բերքերով (օրինակ դիւղերում), մի այլ տեղ «տուրք սեղանով», երբորդ տեղ դրամով կային:

— Բայց դա աղքատութիւն է, կատարեալ մութացկանութիւն է, կասէք դուք ինձ:

— Այո, ժամանակից հասկացողութեամբ, դա մութացկանութիւն է: Եւ հայ հոգևորականութեան մէջ առաջին մութացիկը Ինքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն է և ապա աստիճանաբար գալիս են միւսները, նրա ստորագրեալները:

Ի՞նչ արած, անճարը կերել է բանջարը: Մեր եկեղեցական կեանքը այսպէս է կազմուած:

Հայ հոգևորականութիւնը ստիպւած է միշտ իր ժողովրդի երեսին մտիկ տալ, միշտ իր ձեռքը դէպի նա մեկնել, միշտ նրանից կախում ունենալ, ուստի և սրբութեամբ ու հաւատարմութեամբ ծառայել, սպասաւորել նրան, ժողովրդին:

Այս գրութիւնը ձեզ հաճելի չէ, ձեր կարծիքով հոգևորականութեան համար նւաստացուցիչ գրութիւն է այս, յայն դէպս՝ դուք ձեզ հաճելի և հոգևորականութեան համար պարտաւոր գրութիւն որոնեցէք Հոռոմայ և միւս կղերական կազմակերպութիւն ունեցող եկեղեցիներում:

Բայց միթէ կարելի չէ քահանաներին ուձիկ սահմանել առանց եկեղեցու հիմնական կանոններ խախտելու:

Կարելի է: Եւ այդ թոյլատրւում է թէ եկեղեցական կանոնով և թէ նոյնիսկ պետական օրէնքով:

Վերեւում ես արդէն ասացի, որ հնումը եկեղեցու անուկով սահմանւած նւէրներն ու կալւածներից ստացած արդիւնքներն՝ մասնատրւում էին հոգևորականներին, համաձայն համազգային ժողովների որոշման, յայտնի չափով ու քանակով:

Գուհնի երկրորդ ժողովի ԺԴ յօդուածը,

օրինակի համար, ասում է՝ «տուրք եկեղեցւոյ ըստ օրինի բաժանեացին՝ աւագ երէցանց երկու և կէս մասն, հասարակ քահանայից՝ երկու մասն, սարկաւազաց՝ մի և կէս մասն, դպրաց և այլի կանանց եթէ իցեն կարօտ՝ մի մասն»: Նոյնը ասում է և «Պոլօժենիայի» 1250 յօդուածը: Այս չափերն ու քանակները թէև ոռձիկ չեն նշանակում իսկապէս, վասն զի ամեն մի նւագում կարող են փոխել, շատանալ կամ քշանալ: Բայց և այնպէս դրանցից չէ հետևում, որ մեր եկեղեցին հակառակ կը լինի իր սպասաւորներին կանոնաւոր ոռձիկ տալուն, երբ միայն ունիցի դրաւազրու, կաւ առդիւնաքեր կարածի:

Մայրաքաղաքների հայ քահանաներն, Ռուսաստանի միքանի միւս քաղաքներն ևս, նմանապէս և Հնդկաստանի քաղաքներից միքանիսի քահանաներն արդէն կանոնաւոր ոռձիկ են ստանում, որովհետև նրանց եկեղեցիներն պատրաստի դրամ և պարբերական արդիւնք բերող կալւածներ ունին:

1836 թւականի մարտի 11-ին «Պոլօժենիան» նոյնպէս հակառակ չէ ոռձիկ սահմանելուն: Նրա 1247 յօդուածը ասում է՝ «Получаемое священнослужителями и церковными причетниками содержание может быть трехъ родовъ: 1) постоянное, определяемое имъ отъ прихода при вступленіи ихъ въ должность: 2) даванія,

получаемыя ими за исправленіе духовныхъ
требъ: 3) добровольныя приношенія».

«Содержаніе» նշանակում է ապրուստի միջոց, որ կարող է լինել և դրամով, և հողով: Քահանային ընտրելիս՝ ծուխը նրան յատկացնում է ապրուստի մշտական միջոց, մինչ այն օղբերկրներից, որ ինքը ունի: Այդ միջոցը, սովորաբար քաղաքներում լինում է դրամ, իսկ գիւղերում բերք կամ հողը և կամ երկուսը միասին: Ուստի ինչպէս Բագուի, նմանապէս և ամեն մի Ռուսաստանի քաղաքների հայ եկեղեցիներն կարող են իրանց քահանաներին մշտական, կանոնաւոր ուժիկ սահմանել ըստ օրինակի մայրաքաղաքների և Հնդկաստանի քաղաքների, եթէ միայն նրանց եկեղեցիների նման սըրանց եկեղեցիներն էլ ունին կամ կունենան պատրաստի դրամագլուխ և կամ արդիւնաբեր կալւածք:

«Даяніе» բառը իսկապէս նշանակում է նէր, նւիրատուութիւն, այլ ոչ թէ սուրբ, ինչպէս սովորաբար թարգմանում են մեզմոտ: Բայց նէր լինի թէ սուրբ, յամենայն դէպս նոք չէք կարող երբէք սակազին նշանակել, այլ զա պէտք է լինի անորոշ, միանգամայն նւիրատու կամքից կախւած՝ ինչպէս որ պատւիրում են մեր եկեղեցական կանոններն: Եւ կաւ՝ եթէ սակազին էք նշանակում, այդ սա-

կազինը պէտք է լինի այն, ինչ որ «Պօլօժենիայի» 1248 յօդւածն է սահմանել:

Իսկ այդ յօդւածը կարող է փոխել միմիայն և միմիայն նրան սահմանող օրէնսդրական մարմինը, ուրիշ ոչ ոք:

«Приношеніе», որ նշանակում է ընծայաբերութիւն կամ նւիրատուութիւն, նոյնպէս կամաւոր է:

Ուրեմն «Պօլօժենիայի» 1247 յօդւածի երկրորդ (даянія) և երրորդ (приношенія) պարբերութիւններում յիշւած եկամուտներով երբէք չէ կարելի քահանաներին կանոնաւոր և մշտական ուժիկ սահմանել:

Հետեւաբար անհիմն, ապօրինի և անկանոն է Բագուի եկեղ. ծխական հոհաբարձութեան, ինչպէս և Բաթումի և Թիֆլիզի քահանաների կամ ծխականների որոշումները օրինակատարութիւնները սակազնով անելու համար: Մշտական, կանոնաւոր ուժիկ կարելի է սահմանել 1247 կանոնաւոր ուժիկ պարբերութեան արամադրույօդւածի առաջին պարբերութեան արամադրութեամբ և եթէ: Իսկ այդ էլ կարող են անել, ինչպէս քանիցս ասացի, նւիրական պատրաստի միջոց ունեցող եկեղեցիները միմիայն:

Մկրտիչ Ա. կաթողիկոսը 1907 թւականում հրատարակած «Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ ծխական կանոնադրութեան»

63-րդ յօդածը «Պօլօփենիայի» հետևողութեամբ ասում է՝ «ծխական համայնքը հոգում է իր հոգևոր պաշտօնեաների տնտեսականը հետևալ զանազան եղանակներով, ըստ որոշման ծխական ժողովի:

ա) Մշտական ուժիկ, որ սահմանում է ծխական ժողովը:

բ) Տուրքեր, որ ստանում են հոգևոր պաշտօնեաները ծխակատարութեան համար:

գ) Կամաւոր նւիրաբերութիւններ:

դ) Գիւղերում հող, կալամաս կամ տարեհայտ:

Թող ներքի ինձ ասել, որ վերջին գ. պարբերութիւնը, ըստ իս, աւելորդ է: Նա արդէն մտնում է ա. պարբերութեան մէջ: Իսկ եթէ առանձին զրւած է, դա անշուշտ նրա համար է որ շեշտի թէ քաղաքներում կարելի է քահանային ուժիկ սահմանել զրամով, իսկ գիւղերում հողով կամ բերքերով:

Ինչ էլ որ լինի՝ Խրիմեան կաթողիկոսի կանոնադրութիւնն և՛ իրաւունք չէ տալիս, և չէր էլ կարող տալ, որ քահանաներին կանոնաւոր ուժիկ սահմանի օրինակատարութիւններից ստացւած կամաւոր, պատահական՝ ըստ բ. պարբերութեան և կամ կամաւոր նւիրաբերութիւններից՝ ըստ գ. պարբերութեան: Խրիմեանի կանոնադրութեան մէջ մի յօդւած ևս կայ, որ

ըստ երևոյթին, կողմնակի կերպով թոյլ է տալիս օրինակատարութիւններից ստացւած հասոյթներն և ուժիկ վերածել: Այդ յօդւածը 64-րդ է, որ ասում է՝ «հոգևոր պաշտօնեաների սովորոյթով ընդունւած հասոյթները կարելի է վախատիլնել ուժիկով այնպիսի ծխական ժողովում և ձայների այնպիսի մեծամասնութեամբ, որ պահանջում է այս կանոնադրութեան 60 յօդւածը»:

Ինչպէս ասացի կողմնակի կերպով չիշած «փոխարինել ուժիկով» բառերից դեռ չէ կարելի եզրակացնել, թէ հանդուցեալ Հայրապետը համաձայն էր օրինակատարութիւնների համար նոր և բարձր սակագներ նշանակելու մտքին: Ոչ, քաւ լիցի:

Խրիմեանը որքան էլ որ կարգերով և կանոններով կաշկանդուող մարդ չէր առհասարակ, որքան էլ որ հին մարդ լինելով հանդերձ՝ հնամուլ չէր, այլ ժամանակի ոգին ու պահանջն ըմբռնող և նրան ընդառաջող, կամ գոնէ իրան այդպէս ցոյց տւող անձն էր, այնուամենայնիւ իբրև եկեղեցական և եկեղեցու պետ՝ շատ լաւ հասկանում էր, որ եկեղեցական խորհուրդներն ու ձէսերը փողով, սակագնով ծախու հանելու և պարանքներ, նիւթեր չեն: Այլ իր սահմանած ապրանքներ, նիւթեր չեն: Այլ իր սահմանած կանոնադրութեան մէջ 64-րդ յօդւածն մտցնելով՝ Մկրտիչ Ա. կաթողիկոսը այս է ուզում ասել, որ եթէ ծխական համայնքը քահանաների

համար յատուկ ոտճիկ կը սահմանէ 63-դ յօդ-
ւածի ա. պարբերութեան տրամադրութեամբ՝
այն ժամանակ նա կարող է վերացնել բ. և ա.
պարբերութիւններում յիշւած տուրքերն ու նը-
ւիրաբերութիւններն: Եւ կամ բ. և գ.
պարբերութիւններում յիշւած կամուօր և պա-
տահական հասոյթներն փոխարինել ա. պարբե-
րութիւնում յիշւած մշտական և կանոնաւոր ու-
ճիկով:

Իսկ այդ մշտական ու կանոնաւոր ոտճիկ
աղբիւրը կարող է լինել, — կրկնում և երեքկնում
եմ, — կամ եկեղեցու գրամագլուխը կամ արդիւ-
նաբեր կալւածքը և կամ վերջապէս իւրաքան-
չիւր տարւայ սկզբին ամեն մը ծիսականի կող-
մից յօժարակամ յանուն եկեղեցւոյն հանդանակ-
ւած նւիրագրամը ամենայն տարի պարբերաբար
և այն հաշուով ու քանակով, որով կարելի է լի-
նի քահանաներին և դպիրներին արւելի ոտճիկը
նախօրօք պատրաստել և ամսէ ամիս վճարելով
նրանց, պարտաւորացնել, որ այլևս ոչ մի տուրք
կամ նւէր չստանան ժողովրդից իրանց կատարած
ծէսերի համար: Այսպիսով թերևս, կարելի է
վերջ դնել քահանաների և ժողովրդականների մէջ
երբեմն-երբեմն տեղի ունեցած տարաձայնու-
թիւններին: Եւ այսպիսով կարելի է ժողովր-
դին մօտեցնել եկեղեցուն, — եթէ դուք կարծում
եք, որ ժողովրդին եկեղեցուց հեռացնողը քա-
հանաներն են:

Իսկ այն ձևը, ինչ որ այժմ Բագուի եկե-
ղեցական ծիսական հոգաբարձութիւնն է առա-
ջարկում՝ ոչ միայն ժողովուրդը չէ կարող մօ-
տեցնել եկեղեցուն, այլ ընդհակառակը, կարող
ժողովրդին ոչ միայն ստուցնել եկեղեցուց,
այլև բոլորովին հեռացնել...

Ես այս պարզ տեսնում եմ հոգաբարձու-
թեան կանոնադրութեան մանաւանդ երրորդ
կէտից, որին և դառնում եմ այժմ:

Ե

Հոգաբարձութեան ծրագրի 3-դ և հինգեր-
որդ յօդւածներն Դիւանի կազմաւորման և գոր-
ծունէութեանն են վերաբերում: Ինչպէս տեսաւ
ընթերցողը Դիւանը կամ վարչութիւնը բաղկա-
նալու է 5 հոգուց: Նրա գործը լինելու է՝

- ա) Սակագնով տուրքերն ստանալ.
- բ) Կոնսիստորիայից արւելիք ժապախնեալ
մատեանի մէջ մուծել և ամսէ ամիս մասնա-
դրել քահանաներին և դպիրներին:
- գ) Եղած քահանաների վրայ նորն աւելա-
ցնելու կամ վախճանածին փոխարինելու դէպ-
քում՝ սկզբնական հոգացողութիւնը կատարել:
- դ) Ի պահանջել հարկին այս և այն քահա-
նային յաւելեալ ոտճիկ սահմանել սալ:

ե) Քահանաների գանցառութեան գէպքերում՝ արձանագրութիւն կազմել և Դիւանի եզրակացութեան հետ ներկայացնել ի սնօրէնութիւն թեմակալ առաջնորդին: Եւ վերջապէս՝

զ) Դպիրներին նշանակել և արձակել:

Ես արդէն սասցի, որ հոգաբարձութեան կազմելիք այդ նոր Դիւանը կամ վարչութիւնը նահատեսնեաժ չէ ցարդ գոյութիւն ունեցող կանոններով և օրէնքներով: Ուրեմն նա դեռ նոր պիտի առաջարկւի և կատարւի: Առաջարկել կարող է, ցայց հաստատել՝ բնաւ երբէք: Այդպիսի մարմինը՝ հաստատութեան չէ կարող արժանանալ ոչ կաթողիկոսի կողմից, ոչ էլ կառավարութեան կողմից, վասն զի, ինչպէս իր տեղում ասել եմ, Դիւանի գլխաւոր ֆունկցիան միանգամայն հակառակ է կանոնին և օրէնքին: Ուրեմն նախ քան Դիւանի հաստատելն՝ անհրաժեշտ է այդ կանոններն ու օրէնքներն փոխել:

Բայց մի ըրպէ ընդունեցէք, որ Դիւանի գոյութիւնը ընդունեցաւ կամ հոգեւոր և կամ մարմնաւոր իշխանութիւնների կողմից, և կամ երկուսի կողմից եռ:

Սակայն գործնական կեանքում այդ Դիւանը կարող է գործ կատարել առանց ժողովրդին նեղացնելու, ձանձրացնելու և առանց նրան շահագործելու:

Հազիւ թէ:

Մինչև այժմ ծխականը՝ մի որևիցէ կրօնական պաշտամունք ունենայիս՝ դիմում էր իր ծխական քահանային կամ տոմսակով, կամ ծառայի, կամ բարեկամի ձեռքով, կամ հեռախօսով և կամ—չառ քիչ անգամ—անձամբ անձին: Եւ քահանան գնում և պաշտամունքը կատարում էր: Եթէ փող տայիս էին՝ ստանում էր, եթէ փողի աւշութիւնը յետաձգում էին՝ քահանան համբերում էր: Եթէ պատահում էին ծխականներ, որոնք ոչինչ չէին վճարում, աղքատութեան պատճառաւ գլխաւորապէս, քահանան չէր պահանջում, չէր ստիպում, որովհետև իրաւունք չունէր: Եթէ պատահել է քահանայ, որ ժողովրդին նեղացրել, պահանջել է—այդ քահանան նախ և առաջ ինքն է սուժել՝ իր վարկը իր ծխականի աչքում նւագեցնելով, և երկրորդ՝ թող այդպիսի քահանային պատժեն նրանք, որոնք պարտաւոր են հսկել նրանց վրայ:

Հոգաբարձութեան ծրագրի համաձայն՝ այսուհետև ծխականը նախ և առաջ և անձամբ անձին պիտի ներկայանայ Դիւանին՝ որոշեաժ տուրքը վճարելու և յանուն քահանային թուղթ ստանալու պաշտամունքը կատարելու համար:

Եթէ կարելի լինէր, որ ամբողջ Դիւանը կամ գոնէ 5 անդամից 3-ը ներկայ լինէին՝ նրանք կարող էին հասկացնել, բարոյապէս ազդել ծխականին, որ նա անտրտունջ վճարէ սրտեալ տուրքը: Եւ այդպիսով հեազհետէ ընտելացնել ժողովրդին նոր կարգին հետ:

Բայց հազիւ թէ Դիւանի 3 անդամներն մի-
ասին լինին: Առ առաւելն՝ նրանցից ամէն մէկը
ժամի բակում օրական հերթ պիտի պահէ: Իսկ
այդ մէկը, ով էլ որ լինի, հազիւ թէ կարողա-
նայ ազդեցութիւն գործել:

Ամենից հաւանականը այն կը լինի, — այս
մասին ես համոզւած եմ, — որ Դիւանի անդամ-
ներն սկզբում սրտով գործին կը կպչեն, յետոյ
կը թուլանան, կը ծուլանան, փոքրիկ անախոր-
ժութիւններից յետոյ՝ կը վճատեն, մի կողմ կը
քաշին և սուրքերի հաւաքումը կը յանձնեն մի
կամ միքանի վարձկան մարդկանց, որոնք կը
սկսեն իսկական վարձկանի պաշտօն կատարել:

Այսինքն՝ կը լինի այն, ինչ որ այսօր ծխա-
կան սուրքի նկատմամբ է լինում:

Հոգաբարձութիւնը, թւով 12 հոգի, մի
կողմն են կանգնել և վարձկան «հարկահաննե-
րի» միջոցաւ ծխական սուրք են հաւաքում:
Եւ, ի հարկէ, յաջողութիւն չեն գտնում:

Նոյնը կը կատարւի և կրօնական պաշտա-
մունքներից ստացւելիք սուրքի վերաբերմամբ:
Եւ վերջ ի վերջոյ, մարդիկ ստիպւած կը լինեն
նախկին դրութեանը վերադառնալ, բայց... բա-
ւականին մեծ ու փոքր անախորժութիւններից
յետոյ, բաւականին բողոքներից յետոյ,
յետոյ, բաւականին բողոքներից յետոյ:

Բայց ենթադրենք, որ ժողովրդականների

և Դիւանի կամ նրա նշանակած հարկահանների
մէջ ոչ մի տարունջ տեղի չի ունենալ: Եւ ա-
մեն մի ժողովրդական իրանից պահանջւած
սուրքը սիրով վճարելուց յետոյ՝ կը գնայ հեր-
թապահ քահանային հրաւիրելու: Կամ թէ Դի-
ւանը ինքը կազդարարէ հերթապահին՝ այս ինչ
ժամին գնալ այս ինչ տունը և այս ինչ մար-
դուն այս ինչ պաշտամունքը կատարել: Իսկ
քահանան չէ գնում, որովհետեւ չէ ճանաչում
կամ թէ ճանաչում է թէև, բայց գիտէ, որ օր-
ինական արգելք կայ:

Արդ այդպիսի դէպքերում ինչ պէտք է
արած:

Պատճառը՝ ես բացատրել եմ նախնիթաց
յօդւածներեցս մէկումը: Իսկ սուրքը արդէն
վճարւած պրծած է, գուցէ աւելորդօք:

Մնում միմիայն մի ելք:

Պարտաւորել ծխականին, որ նա նախապէս
ներկայանայ հերթապահ քահանային և նրանից
թուղթ ստանայ, որ իր պաշտամունքը կատա-
րելու արգելք չկայ: Յետոյ այդ թուղթը ներ-
կայացնէ Դիւանին, որոշած սուրքը վճարէ,
ստանայ անդորրագիր և ապա անդորրագիրը
հերթապահին ներկայացնելով, հրաւիրէ նրան
գնալ վերջապէս և պաշտամունքը կատարել:

Հարցնում եմ՝ այս ամեն ձևականութիւն-

ները ինչի համար են: Արդեօք ինչ բարոյական կամ նիւթական շահ գրանցից: Բարոյական շահ բնաւ: Ընդհակառակը՝ դրանով եկեղեցին բարոյապէս կը տուժէ:

Գալով նիւթականին՝ հոգաբարձութեան կարծիքով ձեռնտու է: Հոգաբարձութիւնը կարծում է, որ նա իր այդ ձեռնարկութեամբ՝ կարող կը լինի ոչ միայն հոգևորականութեանը հասանելի սոճիկը հայթայթել, այլ նաև աւելի: Եւ այդ աւելացածով ֆօնդ կազմել կամացկամաց:

Թոյլ եմ տալիս ինձ կարծելու, որ ոչ թէ ֆօնդի համար շատ կամ քիչ գումար կարելի չի լինի անտեսել այդ ձևով, այլ անկարելի կը լինի քահանաներին և դպիրներին յատկացեալ սոճիկն անգամ կանոնաւորապէս վճարելու:

Ասեմ թէ ինչու:

Բազուի հայ ազգաբնակչութիւնը ընդհանրապէս հոշակած է մեզանում որպէս հարուստ ժողովուրդ:

Բայց դա սխալ կարծիք է:

Ճիշտ է, Բագում 10—20 տուն հարուստ հայեր կան, 200—300-ի շափ էլ միջակ կարողութեան տէր ընտանիք, բայց դրանից չէ կարելի եզրակացնել, որ ժողովուրդը ընդհանրապէս և անհասարակ հարուստ է:

Ընդհանրապէս Բագուի հայութեան ամենախոշոր մասը՝ օրական վաստակով է ապրում, իսկ աղքատները, չքաւորները թիւը՝ լեզիօն է:

Ամեն մի արդիւնաբերական քաղաքի նման՝ Բագուն և երկու բեռ ունի՝ ծայրայեղ հարստութիւն և ծայրայեղ աղքատութիւն: Եւ Բագուի աղքատ ազգաբնակչութեան մէջ՝ առաջին տրդը բռնում են հայերը:

Այն հանգամանքը, որ Բագուի հայութիւնը, ի բաց առնելով միքանի բացառութիւնները, ամբողջովին ստիպւած է տուն և մաղազին, ամբողջովին արդէն ապացոյց է, որ նրա խանութ վարձել, արդէն ապացոյց է, որ նրա վաստակի խոշոր մասը գնում է տան և մագազինի վարձի համար: Ապա նա պիտի վճարէ քաղաքի և տէրութեան հարկերը, գործակատարների սոճիկը և ապա թէ եկամուտի աւելացածով պահէ իր ընտանիքը:

Արհեստաւոր և բանւոր դասակարգը, ճշմարիտ է, տան վարձի և քաղաքի ու տէրութեան հարկերկց ազատ է, բայց նրա ստացած սոճիկն և էլ այնքան չէ, որ իր ծախսերը, շատ անգամ և պարտքերը, ծածկելուց յետոյ կարողանայ ինսպարտքերը, ծածկելուց յետոյ կարողանայ ինսպարտքերը, ծածկելուց յետոյ համար մի բան յետ յողութիւ անել, նեղ օրւայ համար մի բան յետ ձգել:

Ահա թէ ինչու համար ես ասացի և ասում եմ, որ Բագուի հայութիւնը հարուստ չէ, այլ օրական վաստակով և նեղութիւնով ապրող մի

բազմամարդ, ստուար համայնք՝ շուրջը 40-50 հազար հոգի:

Եւ որովհետեւ այդ համայնքն է, այլ ոչ թէ նրա հարուստ և փոքր ի շատէ ապահով մասը, որ ամենից շատ և յաճախ կրօնական պաշտամունքներ (մկրտութիւն, պսակ, թաղում, գերեզման օրհէնք) է ունենում սովորաբար, ուստի և հոգևորականութեան պահպանման գրեթէ ամբողջ ծանրութիւնը նրա վրայ է ընկնելու:

Այս այսպէս լինելով՝ ես գտնում եմ, որ օրական եկամուտով ապրող այդ համայնքի կրօնական պէտքերի կատարման համար՝ սակագնով նրանից փող պահանջելն, բացի այն, որ բոլորովին օտարօտի և ապօրինի ու հակառակ է նրա հայեացքին և միանգամայն վիրաւորիչ նրա կրօնական զգացմունքներին, այլ նաև անարդար և ծանր է նրա գրպանի համար: Նամանաւանդ, որ հոգաբարձութեան որոշած սակագները նւազ չափով են: Եւ ուրեմն ամեն անգամ, ինչպէս ստում են, քիչ ու շատ «չսնու քակոց» լինելու է, ինչպէս որ այժմ այդ լինում դիակառքի և ջահերի վերաբերութեամբ:

Եթէ եկեղեցու խորհուրդների, կամ առհասարակ կրօնական պաշտամունքների վրայ նայում էք, ինչպէս վաճառականական նիւթերի կամ ապրանքի վրայ յամենայն գէպս օրինաւոր վաճառականների նման՝ այդ ապրանքին գէթ վերջ-

նական գին, — prix fixe, — նշանակեցէք, որպէսզի չարչիւների նման ստիպւած չլինիք միշտ չանաթակել:

Հա, այն էի ստում, որ հոգաբարձութեան նշանակած սակագներն ժողովրդի գրպանի համար ծանր են:

Ինչ՞ յայտնի չէ թէ՛ այդ սակագներն վիճակագրական սրևէ հիմք ունին արդեօք, թէ գուցէ լոկ հաւանական ենթադրութիւններ են: Բայց ինչ էլ որ լինի այդ սակագների հիմքը, այնուամենայնիւ՝ հոգաբարձութիւնը անկարող է գրասով իրան հարկաւորեալ գումարը հայթհայթել:

Այդ գումարը հասնում է մօտ 35000 ո. — 3000-ական 8 քահանաների, 900-ական 8 դպիրների, Դիւանի ծախք, ոտճիկ հաւաքող պաշտօնէի, և այլն:

— Բայց մի՞թէ, — հարցնում են մարդիկ, — Բագւի քահանաները 3000-ական և դպիրները 900-ական ուրբիլի ցարդ չէին ստանում իբրև հասոյթ:

— Մեծամասնութիւնը ոչ, — պատասխանում եմ ես, — այլ միքանիսը, որ գուցէ և 3000-ից աւելի էլ են ստանում:

Բայց եթէ ընդունելու ևս լինինք, որ ամեն մի քահանայ ցարդ ստանում էր 3000 ո., և ամեն մի դպիր 900 ո., այնուամենայնիւ այժմ

սակազնով, այդքանն էլ կարող չէ հոգաբարձութիւնը ստանալ:

Ահա թէ ինչու:

Բազուի հայերի մէջ ընդունւած ընդհանուր սովորութիւնն այսպէս է:

Միսական քահանան գնում է իր ժողովրդականի սուներ, դիցուք, երեխայ մկրտելու: Մկրտութիւնը վերջացնելով, նա խաչը և մաշտոցը դնում է սեղանի վրայ՝ սկսում է շտիպաբերական մատեանում գետեղելի տեղեկութիւնները արձանագրել: Իսկ այդ միջոցին, ինչպէս նորածնի հայրը, նայնպէս և կնքահայրը և ներկայ եղող բոլոր հիւրերը հերթով խաչն համբուրելով՝ իրանց լուծան են ձգում յօգուտ քահանային: Ամեն մի մարդ ձգում է, սովորաբար, մի ուրբուց սկսած՝ մինչև 10 կոպէկ:

Հաւաքում էք այդ փողերը և դուրս է գալիս 2—5—10 ուրբլի, նայելով հիւրերի թւին ու կարողութեանը:

Հոգաբարձութեան ծրագրով վճարելու է առնուազն 4 ուրբլի: Բայց այն մարդը իսկապէս կարող չէ 4 ուրբլ վճարել: Եւ կամ շատ ծանր, շատ զգալի է նրա համար 4 ուրբլ վճարելն:

Մինչդեռ միևնոյն մարդու երեխի մկրտութիւնից ցարդ քահանան ստանում էր առանց պահանջման և 4 ուրբլ և 6 ուրբլ և 10 ուրբլ:

Միևնոյն բանը լինում է և պատկի ժամանակ, և թաղման ժամանակ:

Քահանան հրաւիրում է, դիցուք, մի մեռել թաղելու: Մեռնողը մի սնանկ և մշակ մարդ է, կամ մի աղքատ արհեստաւոր, որոնց տէրերը միանգամայն անկարող են սակազնով տալ: Այդ մեռելների տէրերին եթէ իրանց մնայ, նրանք կամ ոչինչ չեն կարող վճարել քահանային, կամ 50 կոպէկ, կամ մի ուրբլի: Բայց այդպիսի ննջեցեալներից Բազուի քահանաները սովորաբար ստանում են դարձեալ առանց պահանջման, երկուսից սկսեալ մինչև 8—10 ուրբլի յուղարկաւորութեանը մասնակցողների յիշած խաչհամբոյրներից:

Այս սովորութիւնը ընդհանրացած է Բազուում նաւանաւանդ միջակ և հասարակ դասակարգի ժողովրդականների մէջ: Եւ դա, ըստ իս, վատ սովորութիւն չէ, ոչ թէ այն պատճառաւ և եթ, որովհետև դրանով քահանաներն են շահուում, այլ որովհետև այդ սովորութիւնը իր մէջ պարունակում է շատ խոր և շատ համակրելի սկզբունք:

Եւ երանի չէք լինիլ, եթէ հայ ժողովրդին մենք կարողանայինք վարժեցնել այդպիսի ընկերական, համայնական փոխադարձ աջակցութեամբ և գոհաբերութեամբ պահպանելու ոչ միայն իրանց քահանաներին, այլ նաև իրանց

ղպրոցներին և իրանց ամեն մի հասարակագուտ հիմնարկութիւններին:

Շարունակէնք:

Ոչ ոք չէ կարող ժխտել, ի հարկէ, որ կեանքի մէջ ահագին նշանակութիւն ունի մարդկանց փոխադարձ յարաբերութիւնը, ծանօթութիւնը, բարեկամութիւնն ու մտերմութիւնը:

Տասնեակ տարիներ շարունակ այցելելով իր ծխականի տունը՝ է որ ի պաշտօնէ և է որ անպաշտօն կերպով, հայ քահանան արդէն այդ տան հոգևոր հայրը, նրա պատուաւոր անդամն է է դառնում: Եւ եթէ այդ քահանան իր կոչման և պաշտօնի նշանակութիւնը հասկանում և չէ դաւաճանում, նրա նիւթական վիճակը ազահոված է: Նրա հասոյթը աստիճանաբար կը շատանայ իւրաքանչիւր տարի: Եւ փորձը ցոյց է տալիս, որ, որ յիբաւի, այդ այդպէս է:

Իսկ եթէ ծխականների իրանց արդիւնքների նւագմամբ՝ երբեմն նւագում է քահանայի իրան արդիւնքն ևս, փոյթ չէ, քահանան, ի շնորհս իր ծանօթութեան և բարեկամական յարաբերութեան, միշտ և հանապազ հնարաւորութիւն ունի դիմելու իր այս ու այն հարուստ ծխականին և նրանից փոխարինութիւն անել: Եւ ծխականը տալիս է սիրով, տալիս է առանց տոկոսի և առանց ժամանակի որոշման և յաճախ առանց ստորագրութեան կամ մուրհակի:

Բացի այդ եթէ քահանան իր ծխական փոփոխականի տունն է վարձում, — տանուտէրը միշտ մի բան զեղջում է վարձագնից: Եթէ վարձագինը ժամանակին չէ վճարում քահանան, — տուգանագրամ չէ առնում նրանից:

Դարձեալ՝ եթէ քահանայի նիւթական միջոցները չեն ներում, դիցուք, իր զաւակին ուսում տալու, բարձրագոյն զպրոց ուղարկելու, — նրա այս կամ այն ծխականը նրան որդեգիր է վերցնում, թողակ է սահմանում:

Դարձեալ՝ երբեմն այնպիսի ծխականներ էլ են պատահում, որ իրանց ննջեցեալների վրայ, բացի եկեղեցուն յատկացրած «երեսքաշից» իրանց քահանայի համար ֆարաշացու մահուղներ են ձգում: Եւ կամ արտօնում են նրան այս ինչ մագաղինից իրանց համար ամբողջ շորացու կտորներ վերցնել իրանց հաշին:

Դարձեալ՝ պատահում է որ քահանան երբեմն, իրան անսպասելի կերպով, իր ծխականից ստանում է նաև շատ ու քիչ զրամական նւէր ևս՝ իբրև «յիշելիք»: Յետոյ պարզում է որ դա մի տեսակ փոխարինութիւն է, այս ու այն աջակցութեանը, որ քահանան ցոյց է աւել այս ու այն դէպքում և այս ու այն պարագայում:

Ասածներիցս դժւար չէ եզրակացնել, որ հայ քահանան միշտ և հանապազ կարող է իրան

նիւթապէս ապահոված համարել, եթէ միայն ինքն էլ ըմբռնում է իր կոչումը և այդ կոչման յարակից պարտականութիւնները կատարում է:

Ինչ ասել կուզի, որ քահանայի ապահովութիւնը իր հերթում, սերտ կապ ու առնչութիւն ունի ժողովրդի ապահովութեան հետ:

Վերացնելով ծուխը, կրօնական պաշտամունքները սակագներով կատարել տալով մէն մի պատահած, կամ հերթապահ քահանայի ձեռքով, դուք կը խզէք ծխականի և քահանայի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնը, կօտարացնէք ժողովրդին իր քահանայից և քահանային՝ իր ժողովրդից: Եւ դրա հետևանքը այն կը լինի, որ քահանայի վարկը կը պակասի թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

Մինչև այժմ որքան էր ստանում քահանան՝ շատ թէ քիչ, դա իրան գործն էր: Եթէ շատ էր ստանում՝ աւելին նրա ձեռքիցը ոչ որ չէր վերցնում, պակասորդը նա ոչ ոքից չէր պահանջում:

Այժմ երբ դուք նրանից, — միանգամայն հակառակ իր կոչմանն ու ցանկութեանը, — մի վարձկան, աւտօմատիկ պաշտօնէութիւն էք շինում, ինչով էք երաշխաւորում, որ նա ձեզանից պիտի ստանայ կանոնաւորապէս պայմանեալ ուճիկը:

Եթէ քահանան պարտապանց կը լինի, դուք նրան կը պատժէք, ոտճիկը կը կտրէք: Իսկ եթէ դուք պարտապանց գանւեցաք, քահանան ումից պահանջի իր ոտճիկը: Եկեղեցին դրամագլուխ չունի, արդիւնաբեր կայք՝ նոյնպէս: Եւ եթէ ունենայ էլ՝ դեռ հարց է թէ՛ թոյլ կը տրւի՞ արդեօք այդ փողերով քահանաներին վարձատրել:

Ուրեմն, հարցնում եմ՝ նորից, — քահանաներն այդ գէպքում ինչով ապրին, ում դիմեն, ումնից ստանան իրանց ոտճիկը:

Միամիտներ կան, որոնք ասում են թէ՛ այդպիսի գէպքերում հոգաբարձութիւնը կը դիմէ մասնաւոր հանգանակութեան՝ գէթ գործի սկզբներում:

Այդ միամիտներին իմ տալիք պատասխանը այս է:

Եթէ հոգաբարձութիւնը ժամանակ և ցանկութիւն ունի հանգանակութիւն անելու, — աւելի լաւ կանէ, որ հէնց այժմեանից ձեռնարկէ և հանգանակէ այն 25000 ուրբլին, որ եկեղեցու դրամագլխից՝ առանց ծխական ժողովի և հոգեւոր իշխանութեան թոյլտուութեանը՝ վերցնելով լոր առատ-առատ ծախսեց զպրօցներ ի վրայ, և այժմ ուրիշ ճար չգտնելով՝ մտադիր է Վեհափառ Հայրապետի բարեսրտութեան ղիմելու, որպէս ղի յիշեալ գումարը, հակառակ Սինօզի որոշմանը, եկեղեցին ընդունէ իր վրայ:

Այսպէս ուրեմն՝ հոգաբարձութիւնը քահանայութեան վրայ որոշ պարտականութիւններ է դնում, նա նրան՝ ուղղակի կամ անուղակի կերպով իրան ենթարկել է ուզում, հոգաբարձութիւնը խլում, իւրացնում է նաև մէն մի ծխականի ձեռքից՝ նրա կատարեալ ու արդար իրաւունքը՝ իր խառնուան ունենալու եւ իր ցանկոտքեան եւ յարմարութեան հաւեւուս նրան վարձատրելու, — իսկ ինքը, արգոյ հոգաբարձութիւնը, ոչ մի պարտականութիւն, ոչ մի երաշխաւորութիւն չէ ստանձնում:

Ինչպէս յօդւածիս սկզբում ասացի՝ հոգաբարձական կանոնադրութեան ծրագիրը բաղկացած է 40 պարբերութիւններից, որոց ոչ մէկն էլ կրիտիկայի չի դիմանում: Բայց մենք դրանց զանց ենք անում, չկամենալով աւելի ընդարձակել մեր ասելիքը: Եւ բաւականանում ենք դիտողութիւններով, որ ցարգ արինք ծրագրի գլխաւոր և հիմնական կէտերի վերաբերութեամբ:

Ծրագրի մնացեալ կէտերի նկատմամբ՝ այս փոքրիկ և ընդհանուր դիտողութիւնը կանենք որ նրանց մէջ կան կէտեր, որոնք է որ Առաջնորդի իրաւասութեանն են վերաբերում, է որ, աւագ քահանայի և է որ ծխականների, և յամենայն դէպս ոչ Դիւանի:

Դարձեալ՝ քահանաներին հաւասար ռոճիկ սահմանելով հոգաբարձութիւնը հաւասարութեան

սկզբունք է պաշտպանում: Բայց անա ծրագրում կայ յօդւած, որով հոգաբարձութիւնը խախտելով այդ սկզբունքը՝ այս և այն քահանային «յաւելեալ» ռոճիկ է սահմանել տալիս:

Ուրեմն ակննակաւ քարեհաձորիս ներքեւ, եւ քերեւս խնամութիւնների հիմքը այժմեանից հաւերես է գալիս և առիթ տալիս քահանաների ներքին ստելութեան, նախանձի և այլն:

Այսպէս թէ այնպէս մենք այլ ևս չենք կամենում երկարաբանել: Եւ մեր խօսքը վերջացնում ենք հետեւեալ եզրակացութեամբ:

Եթէ հոգաբարձութեան ծրագիրը՝ առանց նորանոր և մանրամասն քննութեան ծխական ժողովում անցկենալով (որի մասին մենք բնաւ չենք տարակուսում քաջ ծանօթ լինելով մեր ծխական ժողովների էութեանը) հոգևոր բարձրագոյն իշխանութեան հաստատութեանը արժանայ, — յայդէպս՝ այդ ծրագիրը մի լաւ միջոց կը լինի ժողովրդի կրօնական գգացումների շարաշար շահագործւելի:

Իսկ թէ ինչ կը լինի, կամ կարող է լինել, գրա հետեանքը, շատ դժւար է նախատեսներ: Ես գոնէ շատ յոռետես եմ: Եւ դրանից ոչ մի լաւ հետեանք չեմ սպասում:

Եթէ հոգաբարձութիւնը, յիրաւի, քահանայական վիճակը և կոչումը բարձրացնել է ու-

գում, — յայնդէպս թող նա ճղէ, դէն ձգէ իր այդ սակագներն, ս. խորհուրդներ յայդ տաք-սացիան և քանանայից հետ ձեռք-ձեռքի տւած՝ Բագւի ամբողջ հայ համայնքից տարւայ սկզբում կամաւոր նւէր, կամ ծխական տուրք հաւաքէ և նրանով վարձատրէ ինչպէս դպրոցների ուսուցիչներին, նմանապէս և եկեղեցու պաշտօնեաներին, որոնք և պատրաստուած յիկեկ ընդունին, և ընդ ծխականների անեւաստակ պաշտակները արխարտ կուսարեղ: Իսկ եթէ եղան ծխականներ, և անշուշտ կը լինեն, որոնք օրինակատարութիւններից յետոյ՝ դարձեալ մի բան կուտան յօժարակամ, թող դա էլ ընդհանուր սնդուկը մանի:

Հոգաբարձական և քանանայական խառն ժողովներում՝ սողերիս գրողը այս հարցը դրեց, բայց հոգաբարձութիւնը չընդունեց՝ պնդելով որ ժողովուրդը չի տալ նւէրը ևս, ինչպէս չէ տալիս և դպրոցական (ծխական) տուրքը: Իսկ ես հաւատացած եմ, որ կուտայ, եթէ մենք «հարկաններով» վարձկան պաշտօնեաներով չըհաւաքենք այդ տուրքը, այլ անձամբ անձին, գոնէ սկզբի մի երկու տարիներում, մինչև ժողովուրդը ընտելանայ:

Մէկ էլ՝ տուրքի քանակը պէտք է վերցնել շատ նւագագոյն չափով: Բագւում մօտ 20000 իրաւասու ծխական կայ:

Միջին թւով տարեկան դրանցից 4-ական

ուրի յանուն եկեղեցուն նւէր ստանալը՝ ոչ մի առանձին դժարութիւն չէ ներկայացում: Եւ անա ձեզ մի գումար ինչպէս ձեր դպրոցների, նոյնպէս և ձեր հոգևոր պաշտօնեաներին վարձատրելու: Թող որ կարող են և միանալ մեծ ու փոքր գումար նւիրողներ ևս լինել յօգուտ ֆօնդի: Եթէ ժողովրդի մէջ գիտակցութիւն զարթեցնել էք ուզում, այսպիսի միջոցների պէտք է դիմէք, այլ ոչ թէ տաքսացիաների, ոստիկանական միջոցների, որոնք, կրկնում ենք, շատ անակնունելի, շատ ողբալի հետևանքներ կարող են ունենալ:

Մենք մեր ժողովրդին ճանաչում ենք, խօսելում վճռելում, ստորագրելում շատ առատ են, շռայլ, իսկ կատարելում, վճարելում ժլատ, կծծի, բողբօղարկու, խստապարանոց:

2

Մայիսի 9-ին, ժամը 12-ին Մարդասիրական Ընկերութեան շինութեան գաճիճում կայացաւ ծխական ընդհանուր երկրորդ ժողովը՝ քըննելու համար Բագւի ծխական հոգաբարձութեան նախագիծը՝ կրօնական պաշտամունքները սակազնով կատարելու ու ժողովւած դրամներով քահանաներին և դպիրներին առձիկ սահմանելու համար:

ժողովին ներկայ էին ընդամենը 85, — կարգա ութսուն և հինգ, — հոգի:

Չնայած որ հէնց նոյն օրը՝ առաւօտեան հրատարակած «Երկ» թերթում մի յօդած էր տպւած երեք աստղ ստորագրութեամբ, որտեղ հոգաբարձութեան ծրագիրը շատ փառաբանուում էր, այնուամենայնիւ այդ ըեկլամածն յօդածն ևս չէր կարողացել գոնէ մի քանի հարիւր մարդ բերել ժողովին:

Եթէ «Երկ»-ի ռեկլամ-յօդածի վրայ աւելացնենք և այն, որ նոյն օրը, ժամի 12 դահլիճ մտնելիս՝ ծխականներին առաջիկա սեղան բաժանում էին ծրագրի տպագրեալ օրինակները (կարծես թէ չէր կարելի գէթ մի շաբաթ առաջ ցրել, գէթ մայիսի 2-ին, երբ առաջին անգամ նշանակւած էր ժողով), այն ժամանակ կարծեմ հասկանալի կը լինի որ յարգելի հոգաբարձութեան վարմունքը այնքան էլ կօրէկա չէր: Եւ չենք ասում թէ դիտարկեալ այլ պատահաբար կամ զուգահիշաբար՝ այնպէս դուրս եկաւ, որ ծխականները ժամանակ չունեցան ծրագրի հետ ծանօթանալու: Այսպէս թէ այնպէս ժողովը բացւեցաւ 85 ծխականների մասնակցութեամբ:

Նախագահ ընտրւեցաւ պ. Ստեփան Թաղիանոսեան, իսկ քարտուղար՝ պ. Ա. Գրիգորեանց:

Տողերիս գրողը խօսք խնդրելով յայտնեց,

որ, ըստ տրամադրութեան 1907 թ. յունւարի 11-ի ծխական կանոնագրութեան 60 և 64 յօդածները, ներկայ ժողովը չէ կարող օրինաւոր լինել, ինչպէս որ հոգաբարձութեան յայտարարութիւններում գրւում է միշտ: Այլ թող այս ժողովը համարւի լոկ խորհրդակցական, թող հոգաբարձական ծրագիրը կարգացւի, լուսաբանւի, մտքերի փոխանակութիւն լինի, իսկ վճիռ արււ, երբ ամբողջ հայ համայնքը կը ծանօթանայ հարցի էութեան հետ և երբ հնարաւոր կը լինի ծխականների $\frac{2}{3}$ հաւաքել, որի համար և մի միջոց առաջարկեց, որը առաջարկւած էր դեռ երեք տարի առաջ կանոնագրութեան 64 յօդածը իրագործելի դարձնելու համար:

Ումանք հոգաբարձուներ, իսկ ծխականներից պ. Յովհաննէս Քաջագնունի՝ յայտնելով որ ծխականների $\frac{2}{3}$ մասը ժողովելու հնար չկայ թէ ինչպէս ցարդ արել ենք, պէտք է անել և այժմ պնդում էին, որ ժողովը օրինաւոր համարւի:

Քուէարկւեցաւ հարցը և բազմութեամբ վճուեց ժողովը օրինաւոր համարել:

Մենք, որ այդ վախճանը արդէն նախատեսել էինք վաղօրօք պատրաստած մեր բողոք-կարծիքը յանձնեցինք նախագահին օրագրի հետ թեմական իշխանութեանը ներկայացնելու ի տնօրէնութիւն:

Այնուհետև սկսեց հարցի քննութիւնը ըստ էութեան:

Գլխաւոր խօսող և վիճաբանողներ էին հոգաբարձութեան անդամներից մի քանիսը, պ.պ. Յովհ. Քաջազնունի, Յակոբ Մանանդեանց, Պօղոս Կարա-Մուրզա և տողերիս գրողը, իսկ բազմութիւնը լոկ հանգիստատես էր կարծես: Եւ հաւասարապէս ծափահարում էր և ինձ և իմ ընդիմախօս վերոյիշեալ անձինքներին:

Իմ ասածները նոյնն էին, ինչ որ «Հովիտ» ում տպւած են: Սակայն վերոյիշեալ անձինք գտնում էին, որ իմ առաջ բերած եկեղեցական կանոնները և «Պօլօթենիայի» յօդւածներն չեն կարող արգելք լինել, որ ծխական ժողովը այժմ նոր սակագին սահմանէ, նամանաւանդ որ Վեհափառ կաթողիկոսը միքանի անգամ անձամբ անձին իր համաձայնութիւնը բարեհաճել է նախօրօք տալ իրան ներկացող միքանի հոգաբարձուներին:

Միևնոյն հայրապետական այդ բարհաճութիւնը շեշտւած էր նաև «Baky»-ի բեկլամ-յօդւածում:

Վիճաբանութեան ժամանակ մի հանգամանք ևս յայտնի եղաւ, որ ինչպէս ինձ, նմանապէս և ժողովականների համար նորութիւն էր: Պ. Յակոբ Մանանդեանցը յայտնեց, թէ իրանք քաջ յայտնի է, որ հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթողիկոսի հրամանաւ արգէն նոր սակագներով կանոններ են մշակւած և հաստատւած: Բայց թէ

ինչի ցարդ հրատարակւած չէ ի գործադրութիւն, պարոնը չգիտէ: Վերջ ամենայնի հարցը քուէրկութեան դրեցաւ և գրեթէ միաձայն, քացի ինձանից, վճուեցաւ յօգուտ հոգաբարձութեան ծրագրին:

Սկզբունքով վճուեցաւ կրօնային բոլոր պաշտամունքները սակագնով անել և դրանցից գոյացած գումարով ուճիկ սահմանել հոգևոր պաշտօնեաներին:

Հոգաբարձութիւնը համոզւած է, ինչպէս այդ երևեցաւ նրա նախագահ պ. Տիգրան Բէզգազեանցի տւած բացատրութիւնից, որ այդ սակագինը հոգաբարձութեանը կը սայտաբեկան առևնուազն 48 հազար ուրբի, բայց կարող են տալ և 70, և հարիւր հազար ուրբի, սրով հոգաբարձութիւնը ոչ միայն հոգևոր պաշտօնեաների ուճիկը կը հոգայ, այլև բոլոր ծխական գպրոցների ուսուցչական կազմին:

— Ծխական տուրք սահմանեցինք, վերջացրեց պ. Բէզգազեանը իր ճառը, ժողովուրդը չէ տալիս, թոշակ սահմանեցինք՝ չէ տալիս: Բայց այսուհետև նա ստիպւած կը լինի տալու, որովհետև, շեշտեց պարոնը, «մեռնողը՝ պիտի թաղւի, երեխան պիտի մկրտւի, ցանկացողը պիտի պսակւի»:

Ծխական հոգաբարձութեան յարգելի նախագահի այս կարծիքը, գոնէ ինձ համար ամենա-

լաւ ապացոյցն է, որ կրօնական պաշտամունք-
ների կատարումը այսուհետև շահագործութեան
առարկայ պիտի դառնայ հոգաբարձութեան
ձեռքին:

Ես այդ նախատեսնում էի: Եւ կարծեմ
շեշտում էի իմ յօդւածների վերջում:

Ներփակեալ ուղարկում եմ խմբագրութե-
նրդ ծրագրի մի տպած օրինակը, որի մէջ հո-
գաբարձական և քահանայական խառն ժողովնե-
րի ժամանակ տեղի ունեցած մտքերի փոխանա-
կութիւնից յետոյ՝ հոգաբարձութիւնը զիջաւ ա-
ռանձին-առանձին քահանաների ծխերը առայժմ
թողնել և այդպէս էլ տպւած է ծրագրի Ա.
պարբերութիւնում:

Խնդրում ենք, ինչպէս «Հովիտի», նոյնպէս
և մեր միւս թղթերին արտատպել այս ծրագի-
րը և իրանց հայեացքներն ու կարծիքները հրա-
պարակ հանել:

Հարցը շատ լուրջ հարց է: Եւ մեր կարծի-
քով դեռ շատ կարօտ մշակման: Թող հայ հրա-
պարակախօսները չզլանան իրանց սուղ ժամա-
նակներից՝ մի երկու ժամ նւիրել այս բարդ ու
փափուկ հարցին: Եւ թող այս փափուկ հարցը,

որին անշուշտ կը հետևեն և ուրիշ քաղաքների
հայերը, պատահականութեան և հապճեպ վճիռ-
ների չենթարկուին:

Բնաւ չպէտքէ մոռանալ որ բացի եկեղե-
ցական կանոններից և կրօնային տեսակէտից՝
մէջտեղում կան և բուն իրաւաբանական կէտեր
կան «Պոլսօթենիայի» յայտնի և դրական յօդւած-
ներ, որոնք ինքնագլուխ մենք չենք կարող փո-
խել:

Նոյնիսկ նախարարութիւնները և փոխար-
քանները իրաւունք չունին ընդհանրութեան հա-
մար պարտադիր տուրք սահմանել, ուր մնաց
թէ այս ու այն ծխական ժողովը կամ հոգեօր-
իշխանութիւնը:

Բագուի քահանաներին ոռճիկ սահմանելու
հարցի լուծումը յետաձգեցաւ աշնան:

Մայիսի «Գին կայացած ժողովից յետոյ»,
ուր հարցը սկզբունքով վճուեցաւ (մեր կարծի-
քով՝ ոչ կանոնաւոր ժողովով) յօդուտ հոգաբար-
ձական առաջարկութեան, մենք թէ և այլևս չը-
մանակցեցանք ծխական ժողովի հետևեալ նիւ-
տերին, բայց և այնպէս թէ մասնակցողներից և
թէ լրագիրներից հաւտոտիացանք, որ հոգաբար-

ձական կանոնները քննելիս՝ թեր և դէմ վիճաբանութիւններ շատ են եղել, ծխականների մի քանիսի կողմից սուրբեր հաւաքելու նորանոր ձևեր են առաջարկել և այլն:

Այնուամենայնիւ՝ հարցի լուծումը, ինչպէս ասացինք, յետաձգւել է:

Եւ մեր կարծիքով շատ էլ լաւ է եղել:

Այդպիսի դէպքերու շտապողականութիւնը միմիայն վնաս կարող է արտադրել, այլ ոչ օգուտ:

Եւ թող յուսանք, որ մեր եկեղ. ծխ. հոգաբարձութիւնը այժմ ինքն էլ հասկացաւ մեր ասածների և պնդածների ճշմարտութիւնը թէ անպայման անհրաժեշտ է նահապէս ժողովրդին ծանօթացնել հարցի էութեան հետ և ապա թէ որոշում կայացնել, թէ՛ ներկայ դէպքում անձնական հայեացքով և ցանկութիւնով ղեկավարւելը՝ ապարդիւն բան կը լինի, թէ՛ անհրաժեշտ է ի նկատի ունենալ տիրող կարգ ու կանոնը, ժողովրդի մեծամասնութեան, - հաւատացեալների տրամադրութիւնն ու հակումը և այլն:

Տակաւին մի տարի առաջ՝ երբ հոգաբարձութիւնը նոր էր պատրաստուում ձեռնարկել հարցին՝ մենք մեր բարոյական պարտքը համարեցինք զգուշացնել նրան գրելով թէ՛ «Երբէք չպէտք է գանց առնել, որ շատ և շատ լաւ

սկզբունքներ կարող են գլուխ չգալ, կարող են մինչև անգամ վնաս առաջ բերել, եթէ որ այդ սկզբունքները մենք ձեռնարկենք իրագործելու, առանց մանրամասն և լուրջ, բազմակողմանի քննութեան և առանց ի նկատի առնելու եկեղեցական, պետական և սովորութեան (обычное) սրէնքները *):

Սակայն մեր, ինչպէս ասածներն նոյնպէս և գրածներն ուշադրութեան չարժանացան յարգոյ հոգաբարձութեան կողմից:

Այժմ բաւականին մեծ ընդդիմութեան հանդիպելով ժողովրդականների կողմից, հոգաբարձութիւնը ուղղում է սխալը:

Եւ այդ նրան պատիւ է բերում: Որովհետև սխալւելը ամօթ չէ, ամօթ է սխալւած լինելն չուղղելը: Թէ աշխարհ ինչ վախճան կը ստանայ հոցը, — այդ մենք չգիտենք:

Առ այժմ աւելորդ չենք համարում «Հովիտ»-ի ընթերցողներին ծանօթացնել այն գրուածների հետ, որոնք մամուլում երևացան: Լսեցինք, բայց չկարողացանք ձեռք բերել և կարդալ, որ «Биржевые Вѣд.» րագրում մի յօդւած է եղել, որի մէջ հոգաբարձութեան ծրագիրը շատ և շատ գոված ու գովաբանած է, եւ այդ ծրագիրը համարւած է ընդհանրապէս

*) «Հովիտ» 1909 № 39:

հայ ազգութեան կուրտուրականութեան խոշոր ապացոյցներէց մինը:

— Թող այդպէս լինի, ասենք և անցնենք մեր կարգացածներին:

Տեղական թերթերէց «Բաքոյ»-ն միայն մի փոքրիկ յօդած տպեց (№ 104), ուր ամենայն լըջութեամբ և անաչառութեամբ նկարագրում էր մայիսի 9-ին կայացած առաջին փողովի խորհրդածութիւններն ու վիճաբանութիւններն:

«Բաքոյ»-ն աւելի հետաքրքրեցաւ և աւելի շատ քան զրեց (№№ 66, 103, 104, 108, 110 և 121):

Սակայն պ. Վերմիշեանի թերթում երևեցած բոլոր զրեածներն էլ յայտնի ձգտում ունէին և բացարձակ ոչ միայն պաշտպանում էին հոգաբարձութեան ծրագիրը և նրա համար բեկլամներ անում, այլ նաև բոլորովին անարդար կերպով հեզնում և ծաղրում էին ծրագրի հակառակորդին, այն է՝ այս առղերը զրողին:

Հայ թերթերէց «Սուրհանդակը» երկու յօդած տպեց: Առաջինում (№ 95) պ. Վարանդեցին իր յօդածում միքանի սովորական, շաբլօնի յարձակումներ գործելուց յետոյ Բագււի քահանայութեան հասցէին, — վիճակագրական թւանշաններ էր դուրս բերել (պաշտօնական աղբւրից քաղած) այն ամեն օրինակատարութիւն-

ների համար, որոնք քահանաներն արել են 10 տարւայ ընթացքում:

Երկրորդ յօդածի (№ 106) հեղինակը «Քահանայ» ստորագրութեամբ, ինչպէս երևում է հարցից բոլորովին տեղեկութիւն չունի: Եւ իր իր յօդածը գրել է միմիայն «Հովիտ»-ի «5 համարը երէկ կարդալով»: Այսինքն «քահանան» կարգացել է իմ մի շարք յօդածներից՝ միմիայն վերջինը, — այսպէս ասած յօդածներիս վերջաբանը: Եւ ինձ մի քանի հարցեր ուղղելով՝ պատասխանի է սպասում թերևս:

Պատասխանում եմ: Տէր-հայր, կարգացէք իմ յօդածներն ամբողջապէս:

Այս փոքրիկ նեղութիւնը կրելով դուք նախ և առաջ՝ ձեր հարցերի պատասխանները կը գրանէք այնտեղ:

Երկրորդ՝ դէթ փոքր ի շատէ կը ծանօթանաք այն հարցին, որի առթիւ շտապել էք հրապարակ իջնել:

Եւ վերջապէս՝ ամբողջ յօդածս կարդալուց յետոյ, յոյս ունիմ որ ինքներդ էլ կը խոստովանէք, որ եթէ զրպարտութիւն չհամարենք, անշուշտ շաղփաղփութիւն պիտի համարենք ձեր իմ հասցէին ուղղած հէնց այս առաջին սողերն՝ «արգարութեան անուկով խօսողն, երբ որ ընդհանուր հարցն իր անձնականին է շեղում և

տալիս է նրան մի այլանդակ կերպարանք, այդ կէտում նա իր անունը ընդմիշտ դաժապարտելի է անում»:

Ը

Թէ ոուս և թէ հայ օրաթերթերիցը՝ ամենից շատ զբաղւեցաւ այս հարցով «Մշակը» (№№ 102, 104, 108, 116, 117, 123, 126, 131 և 135):

Գրւածքներից մեծ մասը՝ թերթի Բագուի մշտական թղթակից պ. Ս. Գարագաշին ևս պատկանում:

Պարոնը թէև ոչ միշտ ճշտութեամբ՝ սակայն բաւականին մանրամասնութեամբ՝ դուրս է բերել ծխական ժողովներում տեղի ունեցած վիճաբանութիւններն և արտայայտած մտքերն: Տեղ-տեղ էլ իր սեփական դատողութիւններն է անում: Այդ դատողութիւններից և կարծիքներից շատ ցայտուն կերպով երևում է, որ պ. Գարագաշ հոգեբարձական ծրագրի համակրողներիցը չէ: Իսկ այդ ծրագրին այս կամ այն օրոշումը տալու համար, «Մշակի» թղթակիցը անբաւարար է դտնում ցարդ տեղի ունեցած ծխական ժողովների, կազմը և առաջարկում է վերջ ի վերջոյ (№ 131) ծխական ժողով կազմակերպել այնպէս, ինչպէս ես ինքս եմ առաջարկել և պնդել, ինչպէս Յ տարի առաջ, նոյն-

պէս և այժմ: Եւ ինչպէս առաջարկել և պնդել են միշտ Բագուի բոլոր քահանաները բացի մէկից, որ իբրև հոգաբարձութեան անգամ, ըստ ամենայնի համակերպել է նրան,— հոգաբարձութեան հետ:

«Մշակ»-ում երկրորդ գրողն է պ. Յ. Խոջամիր (№ 126), որ հոգաբարձութեան տաքսացիային չհամակրելով, իր կողմից մի նոր եղանակ, կամ տաքսացիա է առաջարկում: Պ. Խոջամիրի առաջարկած եղանակով, հոգաբարձութիւնը տարեկան 125000 ռուբլի եկամուտ կարող է ունենալ իբր թէ:

Համանման, մի այլ տաքսացիա էլ,— գրում է Գարագաշը,— պ. Յովհ. Քաջազնունին է առաջարկել: Եւ ըստ երևոյթին, ծխականների համակրութիւնը աւելի նրա կողմն է թեքւած եղել: Բայց հարցի մինչև աշունք յետաձգելը կարևոր դատելով, պ. Քաջազնունու ծրագրի քննութիւնն ևս յետաձգւած է:

Մենք թէև սկզբունքով հակառակ ենք եղել և հակառակ էլ կը մնանք հոգաբարձութեան ծրագրին,— սակայն մենք այդ ծրագրի մասնատ աւելի պարզ և աւելի զիւրաւ իրագործելի ենք գտնում, քան պ. պ. Խոջամիրի և Քաջազնունու առաջարկածներն:

«Մշակ»-ում երրորդ գրողն է՝ Գիօզիեվսկի

արժ. ներսէս քահ. Վարդանեանցը (№ 117) Այս քահանան, որի յօդածը՝ «Ռոճիկ թէ մուրացկանութիւն» վերնագիրն է կրում,— առհասարակ շատ բարձրերիցն էլ գալիս. պառնասեան ոճով ու եղանակով է ճառում և գտնում է, որ «հարցը այնքան պարզէ, հասունացած և ժամանակակից, որ ոռճիկ տալու սիստեմի մասին խօսելը միանգամայն աւելորդ է»:

Այս տողերն գրելուց յետոյ՝ տէր-հայրը անմիջապէս մէջ է բերում իր խօսակցութիւրը Սեդրակեան Արիստակէս արքեպիսկոպոսի հետ՝ 1902 թւականին և հանգուցեալի պատասխանը, որ մենք ամբողջովին ընդգծում ենք. «Հայ ժողովուրդը իր բացարձակ մեծամասնութեանը ստույգ ընդունակ չէ ընդունելու այդ հարցի (քահանաներին ոռճիկ տալու) կարեւորութիւնը եւ ժամանակակից լինելը»:

Եւ թէպէտ արժ. հ. Վարդանեանցը մխիթարում է նրանով, որ Արիստակէս արքեպիսկոպոսի «փորձը արւել է 10 տարի (խսկապէս 8 և կէս տարի) սրանից առաջ: Շատ բան է փոխւել այդ օրից, շատ չար ու բարի է անցել մեր գլխով»: Բայց թող մեզ ներէ մեր կարգակից եղբայրը, որ մենք նրա մխիթարութեանը, դժբաղդաբար, չենք կարող մասնակից լինել. չենք կարող նրա լաւատեսութիւնը ունենալ: Եւ գտնում ենք, որ եթէ վերջին աստը տարւայ ընթացքում մի ազգային-եկեղեցական կեանքը

«շատ է՝ փոխւել», — այդ փոխւելն՝ եղել է ոչ թէ դէպի յառաջադիմութիւն, դէպի ինքնագիտակցութիւն, այլ... դէպի յետադիմութիւն, դէպի մոլորութիւն և դէպի քայքայումն ու անկում:

Այն գեղեցիկ քանդակ ու գրուագներն, որոցմով վերջին տարիներումս ձեռնարկեցան մեր ազգային-եկեղեցական կեանքի շինութիւնը արտաքուստ նախշելու, — խաբուսիկ և շլացուցիչ զարդեր են: Ինքը՝ շինութիւնը իր հիմունքից խախտւել է: Իսկ այդ գեղեցիկ նախշերը իրանց ծանրութեամբ գալիս են փութացնելու շինութեան կործանումը:

Սակայն մենք այդ ոչ զգում ենք և ոչ էլ ըմբռնում կամ տեսնում:

Ուստի և շարունակում ենք ծովի վրայ... երկրագործութիւն անել և լեռների վրայ... նաւարկել:

Գեօրգիևսկի քահանայի յօդածների իմաստների կրկնութիւնն է և Աստրախանի արժ. Ա. ք. Ասլանեանցի յօդածը «Մշակ»-ի 135 №-մ: Այստեղ էլ քահանաների ոռճիկ սահմանելը՝ հասունացած հարց է համարւում, և այստեղ էլ Բագլի քահանայութեան կտուրը քարեր են նետւում, իբրև թէ այդ քահանայութիւնը հակառակ է ոռճիկի հարցին և յայտնի ու գաղտնի

պայքար է մղում հոգեբարձութեան դէմ: Այսինքն՝ Գեօրգիեվսկի և Աստրախանի յօդաձագիրը քահանաները ճապաղ ձևով կրկնում են այն, ինչ որ իրանցից առաջ «Մշակի» խմբագրութիւնը, համառօտ կերպով, ինքն էր ասել (№ 102):

Ուրեմն՝ պատասխանելով «Մշակի» խմբագրութեանը՝ մենք պատասխանած կը լինենք միևնոյն ժամանակ լրագրի Գեօրգիեվսկի և Աստրախանի արժ. թղթակիցներին:

Ը

«Մշակն» ասում է «որ Բագուի քահանաների համար առհասակ ձեռնտու չէ ոռճիկը, որովհետև մի քանիսը անկանոն կերպով ամեն տարի հազարներ են ստանում»:

Եթէ «Մշակն» ասէր թէ՛ քահանաներից մի քանիսը ոռճիկ հակառակ են, որովհետև իրանք հոգաբարձութեան նշանակածից աւելի են ստանում, — այդտեղ միտք կը լինէր: Միայն թէ այն ժամանակ պէտք էր ապացուցանել թէ՛ որոնք են այն «անկանոն կերպերը», որով այդ քահանաները հազարներ են ստանում:

Սակայն «Մշակի» գրածները մէջ ոչ տրամաբանութիւն կայ և ոչ էլ ապացուցութիւն:

Գործեալ՝ «Մշակն» էլ, նրա թղթակից քա-

հանաներն էլ՝ քահանայից այժմեան վարձատրութեան ձևը՝ «մուրացկանութիւն» են անւանում: Վերջիններիցս մինը՝ մինչև անգամ «գնձուութիւն» էր անւանում:

Ուղիղն եմ ասում, որ ես ոչինչ մուրացկանութիւն չեմ գտնում քահանաների, ինչպէս և միւս հասարակական գործիչների, — օրինակ՝ բժիշկների, — վարձատրութեան եղանակի մէջ: Եւ համոզւած եմ, որ ոչ պաշտօնները, ոչ էլ կանոններն ու սիստեմներն են, որ մարդուն բարձրացնում են, — այլ բոլորովին հակառակը:

Սխալ է, մոլորութիւն է, իմ կարծիքով, ասել ու պնդել են, որ երբ հայ քահանաներն ոռճիկ ստանան, իրանց կոչման բարձրութեան վրայ կը լինին: Ոչ մի գրաւական, ոչ մի առհաւատչեայ ես չեմ տեսնում մէջտեղում: Ընդհակառակը՝ նրանք կարող են աւելի անպարտաճանաչ դառնալ:

Դառնալով բուն հարցին՝ ես պէտք է յայտնեմ «Մշակին», որ Բագույց ֆահաւսները, ամենիկե ել, ոչ միայն ոռճիկ հակառակ չեն եղել, եւ չեն, այլ նաեւ նրանք միակգաւսայն գոհ եւ բաւական եւն հոգաբարձական ծրագրով որոշած ֆահաւսութեամբ, այն է՝ տարեկան 3000 ռուբլիով:

Այս հանգամանքը ամենալաւ ապացոյց է, որ միանգամայն անհիմն է և մտացածին են «Մշակի» և նրա թղթակից քահանաների կասկածը,

իրբև թէ՛ քահանայութիւնը կամ այս ու այն քահանան, հակառակ է հոգաբարձական ծրագրին անձնական հաշիւներից թելադրւած *):

Ոչ, դա զրպարտութիւն է:

Հոգաբարձութեան ծրագրից անբաւական են քահանաները, իսկ տողերիս զրոյր՝ բացարձակ հակառակորդ և բողոքող է զուրս եկել այդ ծրագրին այն պատճառներով, որոնք մի առ մի բացատրւած են «Հովիւ» և «Հովիտ» շաբաթաթերթերում տպւած իմ յօդւածներում:

Եթէ «Մշակը» հաւանում է այդ ծրագրին և օգտակար ու իրագործերի է համարում, թող հերքէ իմ զրաժներն և ապացուցանէ, որ յիշեալ ծրագիրը հակառակ չէ՛:

- 1) Եկեղեցական կանոնին:
- 2) Պօլօթենիայի յայտնի յօդւածներին:
- 3) Որ ծխական ժողովը այդ կանոն ու օ-

*) Գիօրգիեվսկիի Ներսէս քահանան «Մշակի» 171 №-ում մի առասպել պատմելով իբրև թէ՛ Բագուում 100 ր. տնօրհնէք վճարող ծխականներ կան՝ բացահանչում է՝ «դէ, արի ու համաձայնիր 3000 ր. ոռծիկով քահանայ-գործել, քանի որ «նւիրական» մուրացկանութեամբ կրկնակին (??) և եռակին (??) են ստանում և հազարներ (??) դիզում:

Ներսէս քահանայի այս պոչաւոր սուտը՝ միտս ձգեց Հ. Արսէն Բագրատունու հնարած մի պոչաւոր բառը՝ գերարշիամենախենթիսիմուտատոս:

ըէնքներն ինքնագլուխ փոխել իրաւունք ունի:

4) Որ ծխական ժողովը իրաւունք ունի ծխերի վրայ ընդհանուր և պարտադիր պուրք դնել:

5) Որ եթէ այդպիսի սուրբ սահմանել, նրա հաւաքումը մեծ և փոքր ընդգրկմադրութեան չի հանդիպել հաւատացեալների կողմից, որ ոչ մի անկարգութիւն և գայթակարութիւն չի առաջանալ և այլն:

Ահա թէ ինչու մն է հարցը, նրա էութիւնը, այլ ոչ թէ ոռծիկը կամ նրա քանակութիւնը:

Մենք ասել ենք, նորից էլի ասում ենք, որ եթէ հոգաբարձութեան նպատակը՝ քահանայական վիճակի բարւոքումը, կանոնաւորումը լինէր, նա կարող էր այդ նպատակին հասնել, ոչ թէ տիրող կանոնների, օրէնքների և աւանդական սովորութիւնների բոլորովին հակառակ ընթացք բռնելով, ոչ էլ «խթանի դէմ աքացելով», — այլ, ընդհակառակը, հոգաբարձութիւնը իր նպատակին կը հասնէր, նայնիսկ տիրող կանոնների, օրէնքների և սովորութիւնների բառացի իմաստի զօրութեամբ, զրանց պարզ տրամադրութեամբ:

Սակայն դրա համար հարկաւոր կը լինէր բիւրօկրատիքական ձևերից ձեռք քաշել, հարկաւոր կը լինէր ժողովրդի մէջ մտնել, նրան հատկացնել ժամանակի պահանջը, նրան պատրաս-

տել: Մի խօսքով՝ հարկաւոր կը լինէր հոգ քառ-
նայ, — հոգաբարձու դատնայ:

Մէկ էլ՝ հարկաւոր կը լինէր, ըստ առա-
ծին, վերմակի երկարութեան չափով՝ ոտքը ձը-
գելու խելացի կանոնին ընտելանալ:

Իժբաղդաբար մեր պատուելի հոգաբարձու-
թիւնը՝ այդ բաներին շատ գլուխ չունի: Եւ սի-
րում է հնձել՝ առանց սերմանած լինելու, իրա-
ւունքներ բանեցնել՝ առանց պարտաւորութիւն-
ներ ճանաչելու և շոայլել՝ առանց վաստակած
լինելու:

Յարգելի հոգաբարձութիւնը, զոր օրինակ,
կարծում է որ հոգաբարձական կազմի մէջ 4
բժիշկ լինելուց յետոյ էլ՝ անհրաժեշտ է դրսից
մի բժիշկ հրաւիրել դարձեալ՝ վճարելով նրան
600 ուրբլի տարեկան ոռճիկ:

Կարծում է, որ հոգաբարձական ամբողջ
կազմը, կըթւած, ուսում առած, ինտելիգենտ
12 անձինքներից բաղկացած լինելուց յետոյ էլ
պէտք է դրսից հրաւիրել «հոգաբարձական զի-
ւանի գործավար» 1200 ուրբլի տարեկան ոռ-
ճիկով:

Կարծում է, որ «ծխական տուրք գանձող
հարկահաններին» 1800 ուրբլի ոռճիկ տալուց
յետոյ էլ՝ հարկաւոր է «ծխական տուրքի ղե-
կավարին» էլ, — որ հոգաբարձուներից մէկն է,
— տարեկան 1200 ուրբլի վճարել:

Եւ որովհետև այսպիսի և միւս, իրանց ոյ-
ժից վեր բաներ եղած, դպրոցային ծախսերն
ծածկելու համար, հերիքութիւն չեն անում ոչ
եկեղեցիների արդիւնքներն, ոչ սաներից ստա-
ցած թոշակագրամներն, ոչ էլ նմանապէս հա-
ւաքւած ծխական տուրքերն, — հոգաբարձութիւ-
նը ձեռնամուխ եղաւ եկեղեցական դրամագլխին
և նրանից էլ բաւականաչափ ծախսեց, — ըստ իր
բիւրօկրատիքական սովորութեան, — առանց ծը-
խական ժողովի և հոգևոր իշխանութեան գիտու-
թեանն ու թոյլտուութեանը:

Բայց երբ այդ սպօրինի գործողութեան
համար՝ Սինօզը պատասխանութեան հրաւիրեց
հոգաբարձութեանը, — վերջինս մտածեց, մտա-
ծեց և ահա հանդէս եկաւ կրօնային պաշտա-
մունքները տաքսացիայի ենթարկելու միտքը
այսինքն՝ հոգաբարձութիւնը վճուեց ժողովրդի,
— առաւելապէս նրա աղքատ և միջակ դասա-
կարգին կրօնային զգացմունքների շահագործ-
մանը, հարստահարմանը դիմելու:

Հոգաբարձութեան նախագահի Մայիսի 9-ին
արտասանած ճառի վերջին սպառնալիքը թէ՛
«ծխական տուրք սահմանեցինք՝ ժողովուրդը չէ
տալիս, թոշակ սահմանեցինք դժւարութեամբ է
տալիս. բայց նա այսուհետև ստիպւած կը լինի,
որովհետև մեռնողը պիտի թաղւի, երեխան պի-
տի մկրտուի և ցանկացողը պիտի պսակւի», —
այո՛, այս մի քանի բառերի մէջ ամենացայ-

տուն կերպով՝ արտափայլում է հոգաբարձութեան հայեացքը՝ Գրիստոսի հիմնած եկեղեցւոյ և Նրա ոգւոյ մասին, այս և այն ուղղութեան մասին, որով ձգտում է մեր հոգաբարձութիւնը՝ ժողովրդավար հայ եկեղեցին վերածել բիւրօկրատիքական-սուտիկանական մի հիմնարկութեան:

Միրում ենք յուսալ, որ այդ նրան չի յաջողի:

թ.

Քահանաներին ոռձիկ սահմանելու, կամ թէ նրանց նիւթական վիճակը բարեկարգելու հարցը, որ գարնանը այնքան արծարածուած էր Բագում, ըստ երևոյթին մեռած պէտք է համարել:

Մեր եկեղ.-ծխական պատուելի հոգաբարձութիւթիւնը,— յիշեալ հարցի յարուցանողն ու պաշտպանողը՝ խոստացած էր աշնան սկզբին նորից դառնալ հարցին: Բայց անհ հոկտեմբեր ամիսն ևս անցաւ, և ձայն ու ձայուն չկայ: Պատճառն ինչ է արդեօք: Յարգելի հոգաբարձութեան առաջարկած եղանակին՝ բացարձակապէս հակառակ լինելով հանդերձ՝ տողերիս գրողը պաշտպանել է, պաշտպանում է և պիտի պաշտպանէ յիշեալ հարցը սկզբունքով: Եւ իր կողմից առաջարկել է մի միջոց, այն է ժողո-

վողի կրօնական պաշտամունքը կատարել ձրիաբար: Եւ զրա փոխարէն վարձատրել ծխականներից տարէնը մի անգամ զանձուած նւիրադրամներով յանուն եկեղեցւոյ:

Այս միջոցը ունի իր դժւարութիւնները, բայց իրագործելի է, և միանգամայն համապատասխան ինչպէս եկեղեցական, նոյնպէս և պետական կանոններին ու օրէնքներին:

Այդ միջոցը կարող են գործադրել առանց ումնից և իցէ իրաւունք կամ թոյլտուութիւն խնդրելու և առանց հրահանգի և վաւերացման սպասելու և հոգաբարձութիւնը, և տեղական հոգևոր իշխանութիւնը և քահանայութիւնը կամ միասին, կամ առանձին: Եթէ հոգաբարձութիւնը կամ հոգևոր իշխանութիւնը չկամեցան այդ բանին ձեռնարկել, — սոսկ քահանաները իրանք կարող են ձեռնարկել և գլուխ բերել:

Ի տեղեկութիւն յիշեալ հարցով հետաքրքրւողներին՝ գալիս ենք յայտնելու, որ ուսաց սրբագան Սինօղում վերջերումս մի առանձին խորհրդակցութիւն է տեղի ունեցել նոյն հարցի առթիւ և եկել է հետեւեալ եզրակացութեան.

ա) Եկեղեցական խորհուրդներն ու պարտադիր ծէսերը՝ կատարեալ ձրիաբար, առանց որևէ վարձ կամ նւէր պահանջելու ծխականներից:

բ) Քահանաներին ոռձիկ սահմանել՝ գիւղե-

րում 1200 ո. ի տարին, սարկաւագներին 800 ո., դպիրներին 400 ո.: Քաղաքների հողերականութեանը այդ գումարից մի բան աւելի:

զ) Յիշեալ ծախսը ծածկել՝ ա) մասամբ արքունի գանձարանից նշանակած նպաստադրամով բ) մասամբ հողերականութեան յատկացրած հողերի արդիւնքներով, և գ) մասամբ էլ անպարտադիր ծէսերի կատարմանից ստացւած հասոյթներով:

« Ազգային գրադարան



NL0156640

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.



1. Ձէնիաթ—ղէնիաթ
2. Գլխագին
4. Ապօրինի դաւակը
3. Գինեղև
5. Ռաֆֆիի „Կայծերը“
6. Կացինը քարին կպաւ.
7. Մտորումներ
8. Պատմական Քաղաքներ Ա. պրակ.
9. Պատմական Քաղաքներ Բ. »
10. Պատմական Քաղաքներ Գ. »
11. Պատմական Քաղաքներ Դ. »
12. Պատմական Քաղաքներ Ե. »
13. Պատմական Քաղաքներ Չ. »
14. Պատմական Քաղաքներ Է. »
15. Իսրայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը
19. Հայկական հարցի հինգերորդ շրջանը
20. Հայկական հարցի վեցերորդ շրջանը
21. Պատմութեան դասերը
22. Հրապարակախօսական մանրունք
23. Պատմական Քաղաքներ Ը. պրակ.
24. Պատմական Քաղաքներ Թ պրակ
25. Պատմական Քաղաքներ Ժ պրակ
26. Ռոճիկ քահանաներին 30 կոպ.

Գ Գ Ք ա Ղ ա ս Կ Ի Ո

